



ԲԱԼԻՆ



III դրամ



ԿՈՒՅՈՒՏ
ՅԵՐԵՎԱՆ
1933

3602
4-79

«Իրավացի յե լենինիզմը, վոր գյուղացիության աշխատավորական մասսաները դիտում ե վորպես պրոլետարիատի ռեզերվ : Խշխանության գլուխ կանգնած պրոլետարիատը կարող ե և պետք ե այդ ռեզերվն ոգտագործի նրա համար, վոր ինդուստրիան միացնի գյուղատնտեսության հետ, բարձրացնի սոցիալիստական շինարարությունը և պրոլետարիատի դիկտուրայի համար կառուցի այն անհրաժեշտ ֆունդամենտը, առանց վերի անկարելի յե անցնել սոցիալիստական եկոնոմիկային» :

ՍՏԱԼԻՆ

IX

ԳԼՈՒԽ

1000
42798

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆԸ

**1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ԹԵ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԻ**

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՌԵԶԵՐՎՆ Ե

Գյուղացիական հարցը պրոլետարիատի դիկտուրայի հարցը աշխատություն է : Բայց և կիները՝ և տարբերություն մենչեւ կիների, բացառիկ նշանակություն են տալիս գյուղացիական հարցին՝ իրեն պրոլետարիատի դաշնակցի հարցի այն պայքարում, վոր մղում է պրոլետարիատն իշխանության համար :

Լենինը կուսակցությանը սովորեցրել ե, վոր գյուղացիությունը ռեզերվ ե, գյուղացիությունը պրոլետարիատի դաշնակիցն և հեղափոխության մեջ, վոր առանց աշխատավոր գյուղացիության բազմամիլիոն մասսաների ողնության չի կարելի իրադուժել պրոլետարիատի դիկտուրան, ողահել և ամրացնել այն :

Մենշևիկները մոռասատանում, ինչպես և Ա Խնտերնացիոնալի մյուս կուսակցությունները, ժխտում եյին գյուղացիության հեղափոխական ռաժը, անտեսում եյին գյուղացիական հարցը : Դրանում զարմանալի վուշն չկա : Նա, ով ճատում ե գեղի պրոլետարական հեղափոխությունը, ով պայքարում ե պրոլետարիատի դիկտուրայի համար, նա հետաքրքրում է նաև գյուղացիությամբ՝ իբրև պրոլետարիատի դաշնակցով : Այրպիսին են բայց և կիները : Խսկ նա, ով վախենում է պրոլետարական հեղափոխությունից, ով չի կամենում պրոլետարիատին տանել գեղի եւխանություն, ով ընդդիմանում է պրոլետարական դիկտուրային,

նա կարեք չունի գրաղվելու նաև պրոլետարիատի դաշնակիցներով, նա բացասաբար և վերաբերյում գյուղացիական հարցին, սակայ կարեռը հարց համարելով այն:

Բայլշենիները յելնում են այն բանից, վոր աշխատավոր գյուղացիուրյան ընդերքում կան վիթխարի հեղափոխական ուժեր, վորոնց կարելի յե բանվոր դասակարգի ղեկավարությամբ ուղղել վոչ միայն ննդղեմ ինքնակալության, այլև ընդղեմ բուրժուազիայի: Այդ ուժերը կարելի յե և պետք ե ողտազործել պրոլետարական հեղափոխության շահերի ոգտին:

Բայլշենիներն իրենց կաղմակերպության, իրենց աղջեցության բոլոր ուժերն ողտազործել են այն բանի համար, վորպեսզի գյուղացիության աշխատավորական մասսաներին բուրժուազիայի հակահեղափոխական ռեզերվից, վորպիսին եր գյուղացիությունը բուրժուական հեղափոխությունների ժամանակներում Արևմտյան Յելրոպայում, դարձնեն պրոլետարիատի ռեզերվ, նրա դաշնակից, վորպեսզի գյուղացիության հիմնական մասսաներին զբավին պրոլետարիատի կողմը, նրանց տանեն իրենց հետևից՝ պայքարելու սոցիալիզմի համար:

Միայն պրոլետարիատն ե ընդունակ գյուղացիությանն աղատել աղատությունից և ճորտությունից, նրան հանել լավագույն կյանքի ուղին: Ահա թե ինչու, ասում ե ընկ. Ստալինը, լնինիզմը հարց ե դնում «աջակցել, անդայման աջակցել գյուղացիության աշխատավորական մասսաներին այն պայքարում, վոր մղում են նրանք. ճորտության և շահագործման դեմ, այն պայքարում, վոր մղում են նրանք ճնշումից և աղքատությունից աղատվելու համար: Այս, իհարկե, չի նշանակում, թե պրոլետարիատը պետք է աջակցի ամեն մի գյուղացիական չարժման: Այստեղ խոսքը գյուղացիության այնպիսի շարժմանը և այնպիսի պայքարին աջակցելու մասին ե, վորոնք ուղղակի կամ անուղղակի հեշտացնում են պրոլետարիատի աղատադրական շարժումը, վորոնք այսպիս թե այնպիս ջուր են լցնում պրոլետարական հեղափոխության ջրաղացին, վորոնք նպաստում են գյուղացիությունը վերածելու բանվոր դառկարգի ռեզերվի և դաշնակցի:

Ահա թե ինչո՞ւ մեր կուսակցությունն այնքան շատ ուժեր և ուշադրություն ե նվիրում գյուղացիական հարցին, գյուղատնտեսության հարցերին, նրա բարձրացմանը, նրա սոցիալիստական վերակառուցմանը:

Ի՞նչՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ
ՑԱՐԻՉԱՐԱԿԱՆ ՈՐՈՎ

1901 թվին, գյուղացիության այսպես կոչված «աղատազրուման» քառասնամյակին, Լենինը հետեւյալ կերպ եր բնութագրում ռուսական գյուղացիության գրությունը: Այդ բնութագրությունը հիմնականում մինչեւ վերջը ճիշտ մնաց բուրժուազիական Ռուսաստանի համար: Ահա թե ինչ եր գրում Լենինն այն ժամանակ.

«Կոռլորաւթյունից ազատազրված» գյուղացին ունֆորմատորի ձեռքից դուրս յեկալ այնքան տրորված, պլոկված, նվաստացած, իր հողաբաժնին կապված, վոր նրան այլ բան չեր մնում, յեթե վոչ կամովին զնալ կոռվորության: Յեւ գյուղացին սկսեց մշակել իր նախկին բարինի, հողը, նրանից «վարձակալելով» իր խոկ կտրված հողերը, քաղցող ընտանիքին հաց վոխ տալու համար ամառային աշխատանքի վարձվելով: Աշխատավճարում և ստրկացում—ահա թե բործնականում ինչո՞ւ արտահայտվեց այն «աղատ աշխատանքը», վորի վրա «աստծու որհնությունն» հայցելու յեր հրավիրում գյուղացուն ճիղվիտ տերտերի կազմած մանիֆեստը:


Իսկ այդ կալվածատիրական ճնշմանը, վորը պահպանվում եր չնորդիվ ունֆորմն ստեղծող և իրագործող չինովնիկների բարեհոգության, սվերացալ նաև կապիտալի ճնշումը:

Դրամի իշխանությունն իր ամբողջ ծանրությամբ ընկալ մեր կիսաճորտ գյուղացու վրա: Հարկավոր եր փող ճարել ինչ գնով ուղում ե լինի. թե՛ վողորմածություն չնորհող ունֆորմով ավելացված տուրքերը վճարելու համար, թե՛ հող վարձելու համար, թե՛ գործարանային արդյունաբերության այն աղքատիկ արտադրանքները գնելու համար, վորոնք սկսել եյին դուրս մողել գյուղացու տնային արտադրանքները, թե՛ հաց գնելու համար և այլն: Դրամի իշխանությունը վոչ միայն ճգմեց, այլև բաժան-բաժան արեց դյուղացիությանը. վիթխարի մասսան անշեղորեն քայքայեց և պրոլետարիատի վերածվեց, վորքրամասնությունն առանձնացրեց սակավաթիվ, բայց կպչուն կուլակների և տնտեսարար մուժիկների խմբեր, վորոնք զավթեցին գյուղացիական անտեսությունն ու գյուղացիական հողերը, կազմեցին ծնվող գյուղական բուրժուազիատի կադրերը: Հետուելորմյան վող քառասնամյակը այդ աղազյուղացիացման մի համատարած պրոցես և, դանդաղ, տանջակից մահացման պրօցես:

Գյուղացին հասցվեց կյանքի մուրացիկ մակարդակի. նա բնակվում եր անասունների հետ միասին, հաղնում եր ցնցոտիներ, սնվում եր սպանախով. գյուղացին փախչում եր իր հողաբաժնից, հենց վոր տեղ

եր լինում վախչելու, անդամ վրկաղըլում եր իր հողաբաժնից, վճարելով նրան, ով համաձայնում եր վերցնել հողաբաժնը, վորի վճաշումները գերազանցում եյին նրա յեկամտաբերությունը: Գյուղացիները պարբերաբ քաղցում եյին և տասնյակ հազարներով մեռնում եյին քաղցից ու համաճարակից անբերբիության ժամանակ, վորակին կրկնվում եր ավելի ու ավելի հաճախ»:

Գյուղացիության գծոհության աճման, հուղումների և ապստամբությունների աղեկության ներքո ցարական կառավարությունն ստիպված յեղավ համաձայնել 1861 թ. ոեֆորմին: Բայց այդ ոեֆորմը ցարական կառավարությունն անցկացրեց ի նպաստ կարվածատերերի և կապիտալիստների շահերի: Հացի առևտրի զարգացումը, ոռուսական հացի արտահանումը միջազգային շուկա, նրա արտադրությունն ընդուրածակելու անհրաժեշտությունը—կարվածատերերի համար անշահա-



Ինչպես (և ինչքան) գյուղատնտեսական դորժիքներ եյին արտադրում ցարական Ռուսաստանում (միլ. ռուբ.):

վետ դարձրին գյուղացիական ճորտական աշխատանքը: Դրանից բացի արդյունաբերության զարգացումը պահանջում եր ստեղծել ներքին շուրկա և ազատ քանվորական ուժ: Ցարական կառավարությունը, վոր վախենում եր ներքելից յեկող հեղափոխությունից, համաձայնից վերցնել ճորտատիրական իրավունքը վերելից, «ազատազրել» գյուղացիներին: Կալվածատերերն իրենց ոգտին կտրեցին լավագույն հողամասերը, գյուղացիությունից ստացան նրան հատկացված հողի հետզնման վճարումների վիթխարի գումարները: 1861 թ. ոեֆորմը հեշտացրեց կապիտալիզմի զարգացումը գյուղատնտեսության մեջ: Այդ պրոցեսը քայլաւում ընթաց գյուղացիության միլիոնավոր մասսաներին, ուժեղացրեց շերտավորումը գյուղում—կուլակների խավի առանձնացումը մեկ կողմից, և բարակների, գյուղատնտեսական պրոլետարների ու չքավորների կադրերինը՝ մյուս կողմից: Ցարական կառավարությունը, ցանկանալով իր ամուր հենարանն ստեղծել գյուղում, ամեն կերպությամբ առաջարկուելու մեջ է առաջարկուելու մեջ:

Եր կուլակությանը: Իսկ գյուղացիության հիմնական մասսան մուրացիկ վիճակում եր, տանջվում եր սակավահողությունից, ցածր տեխնիկայից, պարտքերից, հարկերից և բուրժուա-կալվածատիրական իշխանության կամայականությունից:

10 միլիոն մանր, մանրագույն, քայլացիած ծխերը նույնքան հողուներին, վորքան 30 հազար ամենահարուստ կալվածատերերը:

Գյուղացիներից քչերին եր սեփական հողը բավականացնում: Միլիոնավոր գյուղացիներ զնում եյին բարակություն անելու կալվածատիրական տնտեսությունում կամ թե կալվածատերերից վարձով հող եյին վերցնում: Վարձով վերցրած հողի համար գյուղացին պետք է կալվածատիրոջը վճարեր գրամով կամ թե նրան տար բերքի մի մասը (յերբու մասը, կեսը—կիսրար, յերենմն ել ավելին), կամ վարձավճարի դիմաց աշխատեր կալվածատիրական տնտեսությունում:

Կալվածատերերը վարձակալությամբ, կիսրարությամբ, աշխատավճարումներով ծծում եյին գյուղացու արյունը, նրան պահում եյին ստրկության և խավարի մեջ, թույլ չեյին տալիս, վոր նա վոտքի կանդնի: Իսկ ցարական ուրբագնիկները և չինովնիկները գյուղացուն խորտակում եյին հարկերով և տուբքերով: Գյուղացիության վիթխարի մասսան աղքատ եր և քայլացիական հողաբաժնների մանրացումը տեղի յեր ունենում ավելի ու ավելի մեծ չափով, և Հոկտեմբերյան հեղափոխության սկզբներին մանր ծխերի թիվը մոտ 16 միլիոն եր կազմում:

Այդ չի նշանակում, թե քայլացիում և աղքատանում եր ամբողջ գյուղացիությունը. գյուղացիության աննշան, ամենից ավելի հարուստ վերնախավը բարելավում եր իր տնտեսությունը, պլոկերով չքավորությանը, ստրկացնելով նրան:

Լինինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» դրքում, վորս գրված երանտում և աջորում, ցույց ետվել, թե ի՞նչոք գյուղի շերտավորման չնորհիլ զարգանում են ծայրագույն խմբերը—մեկ կողմից՝ կուլակությունը, մյուս կողմից՝ գյուղատնտեսական պրոլետարիատը բարակակությունը: Գյուղացիության միջն խմբին՝ միջակին, նա հետևյալ կերպ ենթաթագրել.

«Ինքնուրույն հողազործական աշխատանքը թերեւս միայն լավագույն տարում և առանձնապես բարենպատ պայմաններում ծածկում է ալդպիսի գյուղացիության ապրուստը, և զրահամար ել նա գտնվում է ծայրահեղ անկայուն վիճակում: Մեծ մասամբ միջակ գյուղացին չի կարող ծայրը ծայրին հասնել տանց փոխառությունների դիմելուն աշխատավճարումների և նման այլ ձևերով, առանց վնասուելու «ոժանգակ» կողմնակի վաստակներ, վորոնք նույնպես կազմված են մասամբ

բանվորական ուժի վաճառքից և այլն։ Յուրաքանչյուր անբերիություն
միջակ գյուղացիության մասսաներին պրոլետարիատի շարքերն են ներ-
առում։ Եր հասարակական հարաբերություններով այդ խումը տատան-
վում է բարձրագույշի, դեպի վորը նա ձգվում է և վորի մեջ հաջողվում
և ընկնել լոկ փոքր քվով քախտավորների, և ցածրագույնի միջև, դեպի
վորը նրան մոռաւ է հասարակական նվոյուցիայի (հասարակական զար-
գացման) ամբողջ ընթացքը։ Գյուղացիական բուրժուազիան դուրս ե
գանում գյուղացիության վոչ միայն ստորին, այլև միջին խմբին։ Սյո-
պիսով տեղի յեւ ունենում կապիտալիստական տնտեսությանն սպեցիֆիկ
կերպով յուրահատուկ՝ միջին խմբերի քուլացումը և ծայրահեղու-
թյունների ուժեղացումը—«ապաշխուղացիացումը»։

Այսպիսին եր գյուղացիական տնտեսության զարգացման ընթացքը
ցարական թուսաստանում։ 1905 թվի հեղափոխությունից հետո, վորը
ցնցեց գյուղացիական մասսաներին, նրանց վոտքի հանեց պայքարելու
կալվածատիլուջ և ինքնակալության դեմ, ցարական կառավարությունը
մի շարք նոր միջոցներ ձեռք առավ կուլակային տնտեսություններն ամ-
րացնելու համար։ Ցարական մինիստր՝ սարտառվածի խոշուագույն կալ-
վածատեր Մտոլիալինը կիրառեց կուլակային տնտեսություններին աջակ-
ցելու, նրանց ամրացնելու կողմն ուղղված միջոցառումների մի ամբողջ
միտում։

Մտոլիալինյան քաղաքականությունն ողնեց կուլակին՝ ստեղծելու
ամուր խուստորային տնտեսություն, աջակցեց նրան վարկերով, ինվեն-
տարով։ Կուլակությունը վնասատեց ցարական իշխանության այդ շան-
քերը։

Ռուսաստանում գյուղացիական տնտեսության զարգացման այս
ընթացքին վերջ գրեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Հոկտեմբեր-
յան հեղափոխությունն արմատից պակեց կալվածատիլական հողատի-
րությունը և ուժեղ կերպով խորքից կտրեց կուլակային տնտեսությու-
նը։ Միջակ գյուղացիությունը և չքալորությունն իրենց հողերն ավե-
լացրին ավելի քան 2 անգամով։ Միջակները և գյուղացիական չքա-
վորությունը հողի ազգայնացումով իրենց ողտագործման համար ստա-
ցան 50 միլիոն հեկտարից ավելի կալվածատիլական հող և սակավահող
տնտեսությունների ովտին կուլակությունից խլված զգալի ավելցուկ-
ներ (նույնպես մոտ 50 միլիոն հեկտար), այդ նույն տնտեսություննե-
րը 10 միլիոն հեկտար ևս ստացան պետական Փոնդերից։ Դադարեց
գյուղի ապագյուղացիացումը, գյուղը դարձավ առավելապես միջակա-
յին, նա միջակացավ։

ՅԵՐԿՈՒ ՈՒՂԻ

Միջակ-չքալորական դյուլը Հոկտեմբերյան հեղափոխության հե-
տևանքով վոչ միայն հող ստացավ։ Նա պրոլետարական իշխանություն-
նից ստացավ տնտեսական և յերկրագործական վիթխարի ողնություն։
Արդեն իսկ վերականգնման ըջանի վերջում գյուղի բարեկեցությունն
զգալի չափով բարձրացավ, գյուղանտեսական մեքենաների քանակը
դերազանցեց նախառարարեցման մակարդակը, չարելավեց հողուշի-
նարարությունը, աճեց բազմացածությունը, տեսակավոր հացահա-
տիկի և տեխնիկական կուլտուրաների ցանքսերն անցան նախահեղափո-
խական շրջանից։ Առաջին անդամ տեխնիկական կուլտուրաների համար
ոկտեցին հանքային պարարտանյութեր գործադրվել։ Յերեան յեկան
տրակտորները, վոր առաջ յերբեք չեյին տեսել գյուղացիական դաշտե-
րը։ Հնդամյակի առաջին տարվա նախորյակին այն ժամանակ արագածա-
մանից ներմուծված 30 հազար տրակտորներն ակոսում եյին կալվածա-
տիրական և և աղնվականական ճորտությունից աղատագրված դաշ-
տերը։

Բայց այնուամենայնիվ, չնայած գյուղատնտեսության այդ աճման,
գյուղի բարեկեցության բարելավման, գյուղացիական տնտեսության
բնիկանուր գարգացումը հեգամյակի սկզբին չափազանց ենու եր մնում
սոցիալիստական արդյունաբերության գարգացման տեմպերից, վորը
հենց արդյունաբերության համար ստեղծում եր պարենի և հումքի
դրամի գժվարություններ։

Գյուղատնտեսության զարգացման դանդաղ տեմպը և նրա ծայր
աստիճան փոքր ապրանքայնությունը, այսինքն՝ պետության կարիք-
ների և շուկայի համար հաց բողնելու անբավարար հնարավորու-
թյունները, առաջացել եյին գյուղացիական տնտեսությունների ծայր
աստիճան փոշիացած ու մանրացրիլ լինելու հետևանքով, տնտեսու-
թյուններ, վորոնց թիվը հեղափոխության ժամանակ 16 միլիոնից
հասել եր 25 միլիոնի, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի
չափազանց ցածր մակարդակի հետևանքով։ Մոտ 10 միլիոն գյուղա-
տիրական տնտեսություններ ձի չունեյին և անգամն 5 միլիոն տնտեսու-
թյուններ վարում եյին արորով։ Գյուղացիական տնտեսությունը զար-
գացման և հատկապես աղրանքայնության բարձրացման միանդամայն
սահմանափակ հնարավորություններ ուներ։ Գյուղացիական տնտեսու-
թյունը պետք ե փոխադրվեր իր զարգացման այլ ուղի։


Գոյություն ունի հողագործության զարգացման յերկու ուղի—
կապիտալիստական ուղի և սոցիալիստական ուղի։

«Գյուղացիական տնտեսության զարգացման կապիտալիստական

ուղին, —առում և ընկ. Ստալինը, — նշանակում և զարգացում՝ դյուրացիության ամենխորը դիմիքերենցիայի (չերտավալորման) միջոցով, մեկ բնեռում՝ խոչոր լատիֆունդիաներով (կալվածներով), մյուս բնեռում՝ մասսայական աղքատացումով:


Գյուղի զարգացման կապիտալիստական ուղին նշանակում եւ, ինչպես այդ ցույց եւ տալիս կապիտալիստական յերկրների որինակը, ուժեղ կապիտալիստական դաստիարագի (կուլակների) ստեղծում գյուղում, գասակարդ, վորը միլիոնավոր մանր և մանրագույն տնտեսությունների անխնա շահագործման, նրանց քայլայման և կլանման հիման վրա իր ձեռքում միավորում եւ արտադրության միջոցների հիմնական մասնան, գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը:

ԽՀԱԻՍԻ (ՅԵՎ, ԽԵԶԲԱՆ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔՆԱԾԵՐԻ ԵՑԻՆ
ԱՃԵՍՏՈՒՄ ԴԱՇՏԵԲՈՒԹ



ՄՐԱԿՄՈՐՆԵՐ

ԱՎՈՉՆԵՐ



1931 թ.

Այդ ուղին անխուսափելի յե կապիտալիստական յերկրներում, վորովհետև գյուղը, գյուղացիական տնտեսությունը կախման մեջ են քաղաքից, իշխանության բնույթից, իսկ քաղաքում տեղում ե բուրժուազիան, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը:

Պարտադիր ե արդյոք գյուղացիական տնտեսությունների զարգացման այդ ուղին մեր յերկրում, վորտեղ քաղաքը բոլորովին այլ տեսքում, վորտեղ ինքուստրիան գտնվում ե պրոլետարիատի ձեռքում, վոր-

տեղ հողի ազգայնացումն ընդհանուր որենք և հանդիսանում յերկրում: Իշարկե, պարտապելիք չե»: Ընդհակառակը, հենց նրա համար, վոր դյուրակիավարն եւ հանդիսանում քաղաքի պրոլետարիատը, վորն իր ձեռքումն ե պահում ժողովրդական տնտեսության բոլոր հրամանատաշական բարձրունքները, հենց դրա համար զյուղացիական տնտեսություններն իրենց զարգացման ընթացքում պետք ե զնան այլ ուղղության ուղղության վետական շինարարության ուղղության:

Անհատական խոշոր տնտեսության ստեղծման կապիտալիստական ուղղում Առողջապահությունը համբայնացված տնտեսության ստեղծման պրակտարական մեջ ուղղ՝ արտադրական կոռպերացման, կոլեկտիվացման միջոցով, վորոնք մանր և մանրագույն տնտեսությանը հնարավորություն են տալիս, խորհրդային իշխանության աջակցությամբ և զեկավարութամբ՝ ամրանալ կոլեկտիվ աշխատանքի սկզբունքներով և բարձրանալ տեխնիկայի ու կուլտուրայի բարձր մակարդակի վրա: «Զարգացման այս ուղին, Անհելով գյուղացիության միլիոնավոր մասսաներին աղքատությունից ու քայլայմից աղատագրելու միակ ուղին, նշանակում ե վոչ միայն գյուղի կապիտալիստական ելեմենտների աճման սուհմանափակում, այլև նրանց վտարում՝ խոշոր հանրային տնտեսության (պետական և կոլեկտիվ) միջոցով»: Զարգացման այս ուղին նշանակում ե գյուղի կապիտալիստական ելեմենտների կուլակության՝ վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Անինը դեռ մինչև 1905 թ. հեղափոխությունը մատնանշել ե, վոր մանր գյուղացիությունը կապիտալի ճնշումից կարող ե ազատվել միմիայն միանալով բանվորական շարժմանը, նրան ողնելով սոցիալիստական կարգերի համար, հողը, ինչպես նաև արտադրության մյուս միջոցները հանրային սեփականության վերածելու համար մզվող պայքարում:

Անինը պրոլետարական հեղափոխության դործի համար իր մզած յերեսնամյա պայքարի ամբողջ ընթացքում բազմից մատնանշել ե, թե կոլեկտիվ տնտեսությունները, կոլտնտեսությունները միակ միջոցն են հանդիսանում, վոր գյուղացուն յելք են տալիս կարիքից ու խավարից:

Անինն ասել ե: «Ապրել հին ձևով, ինչպես ապրել են մինչև պատերազմը, չի կարելի, և մարդէկացին ուժերի ու աշխատանքի այնպիսի հափշտակում, վորպիսին կապված ե մանր, առանձին գյուղացիական տնտեսության հետ, այլև չի կարող շարունակվել: Կրկնապատիկի-յեռապատիկ կրաքարանը աշխատանքի արտադրադականությունը, կըրկնապատիկ-յեռապատիկ կինայի մարդկային աշխատանքը հողագործության և մարդկային տնտեսության համար, յերե այդ բաժան-քանան մանր տնտեսությունից անցում կատարվեր դեպի հանրային տնտեսությունը»:

Բայց վորպեսզի այդ անհրաժեշտ, միանգամայն անխուսափելի անցումը կատարվեր, հարկավոր եր հեղափոխական նախաձեռնություն, ղեկավարություն քաղաքային պրոլետարիատի կողմից, առանց վորե չեր կարող իրականացն զյուղացիական տնտեսության զողումը յերկրի սոցիալիստական ինդուստրիայի հետ։ Մեր յերկրում դիկտատուրա իրագործող բանվոր զասակարգի դերը կայանում եր նրանում, վոր նապետքեւ ղեկավարեր մանր և մանրագույն տնտեսությունների անցումը ղեկի հանրայնացված կոլեկտիվ աշխատանքը, մանր զյուղացիական տնտեսությանը տրամադրեր մեքենաներ, պարարտանյութ, աղբոնո-

ԹԵՇԻՆԱ-ՏՐՎԱՑՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԱՃՈՒՄՆ ՀԱՅ ՏԱՐԻՆԾ Ի

ԹԵՇԻՆԱ-ՄԱՍԿՈՐՆԵՐԻ
ԵԱՅԱՆՆԵՐԻ ԱԹՈՎՐ ՄԱՐԻՆ



միա, վորպեսզի յուրաքանչյուր միջակ և չքավոր կարողանար գործնականում համոզվել խոչոր կոլեկտիվ տնտեսության առավելությունների մեջ։

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՂՊԵՐՍԱՑԻՎ ՊԼԱՆԻ ԴԵԳԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ ՏԱՆՈՂ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆ Ե

Ամենից ավելի հասկանալի, հեշտ և մատչելի ձեւ, վոր գյուղացիոն ներին սովորեցնում ե կոլեկտիվ կերպով վարել տնտեսությունը, հանդիսանում ե կոռպերացիան։

«Բանի վոր պետական իշխանությունը բանվոր զասակարգի ձեռքումն ե, — զրում եր Լենինն իր «կոռպերացիայի մասին» հոդվածում, — քանի վոր այդ պետական իշխանությանն են պատկանում արտադրության բոլոր միջոցները, մեղնում, հերալի, մնացել ե միայն ազգաբնակչության կոռպերացման խնդիրը»։

Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, յերբ ղեկավար դերը պրոլետարիատին ե, կոռպերացիան ստանում ե վիթխարի նշանակություն։ Լենինը մատնանշել ե, վոր հենց կոռպերացիայի մեջ «մենք գտել ենք մասնավոր շահի, մասնավոր առևտրական շահի միացման, պետության միջոցով նրա ստուգման և վերահսկողության այն աստիճանը, նրան ընդհանուր շահերին յենթափելու աստիճանը», վորը մեղաքալոր ե։

Կոռպերացման վո՞ր ձեւերն եյին գերակշռում գյուղում նեղի առաջին առաջներին։ Գյուղում բավական լայն տարածված եր վաճառահանման կոռպերացիան (վորտեղ միանում եյին առանձին տնտեսություններն իրենց գյուղատնտեսական արտադրանքը վաճառահանելու համար—կաթնատնտեսական, վուշաղործական, յուղագործական և այլ կոռպերացիա), վարկային և մատակարարման կոռպերացիան (վորը գյուղացիներին միավորում եր գյուղատնտեսական գործիքներ և պարագատանյութեր զնելու զծով), սպառովական կոռպերացիան (վորը գյուղացիությանը լայն սպառման առարկաներ եր մատակարարում)։ Անցումը գեղի արտադրական՝ կոռպերացիան, այսինքն՝ աշխատավոր գյուղացիների միացումն ընդհանուր հողի վրա, արտադրության ընդհանուր զործիքներով ընդհանուր կատարելու համար, ինքնին հաջորդ առաջնությաց քայլն եր ներկայացնում կոռպերացիավ գործունեյության այս պարզագույն ձևերի նկատմամբ։

Կոռպերացիայի բալոր տեսակների ծավալումը, կոռպերացիայի ստորին աստիճաններից անցումը դեպի բարձրագույն ձևերը, դեպի կալտինեսուրյալների ստեղծումը, միինմավր աշխատավոր գյուղացիների արտադրական կոռպերացումը—ահա՛ կենիքի կոռպերատիվ պլանի եյությունը, ահա՛ զյուղի ուղին դեպի սոցիալիզմ։

«Սա միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների մասսայական կոռպերացման ուղին ե կոռպերացիայի բոլոր գծերով, — ասում եր ընկ։ Ստալինը 1925 թվին, — փոշիացած գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ինդուստրիայի շուրջը միացնելու ուղին, գյուղացիության մեջ կոլեկտիվումի հիմունքները հաստատելու ուղին։ Նախ հողագործության մթերքների վաճառահանման և գյուղացիական տնտեսություններին քաղաքացին գործիքներ մատակարարելու գծով, իսկ հետո՝ գյուղատնտեսական արտադրության գծով։

Ենք ինչքան առաջ ենք գնում, այնքան ավելի այդ ուղին անխուսափելի յի գանում պրոլետարիատի գիլտատուրայի պայմաններում, վորովհետեւ կոռպերացումը վաճառահանման գծով, կոռպերացումը մատակարարման գծով, վերջապես, կոռպերացումը վարկի և արտադրության գծով (գյուղատնտեսական ընկերություններ) հանդիսանում ե գյուղի բարեկեցության բարձրացման միակ ուղին, գյուղացիության լայն մասսաներին աղքատությունից և քայլայումից փրկելու միակ միջոցը»։

ԼԵՆԻՆԻ ԿՈՂՊԵՐՍԱՑԻՎ ՊԼԱՆԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՈՎ

Մեր արդունաբերությունը տարեց-տարի ավելացրեց տեմպերը և իրենից շատ հետ թողեց կապիտալիստական ինդուստրիայի զարգացման տեմպերը։

Ինչով բացատրել գյուղատնտեսության զարգացման համեմատա-
բար այդպիսի զանգաղ տեմպն արդյունաբերության զարգացման տեմ-
պի համեմատությամբ։ Այդ բացատրվում է գյուղատնտեսական արտա-
դրանքի ծայր աստիճանի հետամնացությամբ և գյուղի կուլտուրական
գրության ցածր մակարդակով։ այդ բացատրվում են նրանով, վոր փո-
շեցած գյուղատնտեսական արտադրությունը չուներ այն առավելու-
թյունները, վորպիսիք ունի մեր խոշոր սոցիալիստական արդյունաբե-
րությունը։

Վո՞րտեղ և յելքը : «Յելքը, —պատառխաննել և ընկ . Ստալինը, մրանումն է, վոր մանր ու փոշիացած գյուղացիական տնտեսություններն անցնեն խոշոր ու միացած տնտեսությունների՝ հողի հանրային մշակման հիման վրա, անցնեն հողի կողեկտիվ մշակմանը՝ նոր, բարձրագույն տեխնիկայի բազայի վրա : Յելքը նըանումն է, վոր մանր և ժամանակույն դյուղացիական տնտեսություններն աստիճանաբար, բայց անշեղորեն, վոչ թե ճնշման կարգով, այլ ցուցադրման և համոզելու հարցով, միացնելով դարձնենք խոշոր տնտեսություններ՝ հողի հանրային, ընկերութիւն, կողեկտիվ մշակման հիման վրա, գործադրելով դյուցատնտեսական մեջենաներ և տրակտորներ, գործադրելով հողագործության բնակչություններ : Այլ յելք չկա Առանց դրան մեր դյուղատնտեսությունն ի վեճակի չե վոչ հասնել և վու և անցնել դյուղատնտեսական տեսակետից ամենից ավելի զարգացած հապիտավոտական յերկրներին (Կանադա և այլն)» :

Ըսկ. Ստալինն այն ժամանակ կուսակցությանը վճռական բայլ-չեկիյան խնդիր առաջարկեց, իսկ XV համագումարն ընդունեց վորակության փակտիվ ամբողջ կուսակցության, ամբողջ յերկրի համար—ընդլայնել գյուղացիական տնտեսության ընդդրկումը կոռուպտացման և պետական որդանների կողմէց վաճառահանման ու մատակարարման գծով և գյուղական մեքենայի շնորհագուման համար առաջարկությունը գործնական խնդիրը դարձնել՝ փոշիացած գյուղացիական տնտեսությունների աստիճանական փոխանցումը՝ միավարված, խոշոր տնտեսությունների ուղևորի վրա, հոգի

հանրային, կողեկտիվ մշակման ռելիեքի վրա՝ հոգագործության ինտենսիվացման, մեքենայացման հիմունքով։

Այս խնդրի լուծումը հնարավոր է միայն կուլտուրյան դեմ անխնձապահարելու, միջակային մասսաների հետ զաշինքն ամբացնելու և պրոցեսարիատի կողմէից գյուղում չքավորության վրա ամուր հենակելու ճանապարհով :

թէ իրէջան ժամանակին եր կուսակցության ՀՎ համազումարի վկարչումը, այդ մասին վկայում և այն հակառարձակումը, վորին կուլակությունը ձեռնարկեց ի պատասխան կուսակցության քաղաքականության: Կուլակությունը, վորն այն ժամանակ տալիս եր ապրանքային հացի մեկ հինգերորդ մասը, «Հացի գործադրություն» հայտարարեց, հույս ունենալով վախեցնել բայլշեկիկներին և նրանց ստիպել համարվելու իրենց հակալուակային քաղաքականությունից, կուլեկտոված ման քաղաքականությունից: Կուլակությունը փորձեց իր կողմը քաշել միջակին և դրանով վախեցի տակ դնել պրոլետարական դիկտատուրայի ամբողջունը:

Կոռակցությունը և խորհրդային էջմանությունը զախչախիչ հարված հասցրին հացը չարամտաքաք չհանձնողերին, կուլակության գերմագրությունը կոտրվեց: Գյուղի կապիտալիստական վերնախավին նկատմամբ ձեռք առնված արտակարգ միջոցները վոչ միայն նպաստեցին հացամթերումների հաջողությանը, այլև չքավոր-միջակային լայն մասսաներին համախմբեցին պրոլետարիատի շուրջը՝ ընդդեմ դասակարգակին թշնամու:

1928թի կուլակային հացամթերման կամովանիայի դասերը ցույց տվին, վոր հասունացել և վողջ գյուղատնտեսության վերելքի տեմպերն ուժեղացնելու հարցը՝ միակ հնարիավոր ճանապարհով՝ զյուղացիությանը կոլտնտեսություններում միավորելու և մասսայական մասշտաբով խորհանուեառներ կառուցելու ճանապարհով:

2. ՄԵՇ ԲԵԿՈՒՄԸ—ՄԻԶԱԿԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ
ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

ԱՐՄԱՆԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ՆԵՐՍՈՒՄ ՅԵՎ ՆՐԱ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

10 տարի առաջ Լենինը մեր կուսակցության XII համագումարում՝
1922 թվին, հայտարարեց. «Միանալ գյուղաշիական մասսայի հետ,
և սկսել առաջ շարժվել անչափ, անսահման ավելի դանդաղ, քան Մենք
յերազում ենինք, բայց դրա փոխարեն այնպես, վոր իրոք ամբողջ մաս-
սան շարժվի մեզ հետ միասին, —այս ժամանակի այդ շարժման այնպիսի

արագացում վրա կհասնի իր ժամանակին, վորի մասին մենք այժմ յեռաղել անդամ չենք կարող»:

Այդ գուշակությունն ամբողջապես իրականացավ: Շարժման արագացումը վրա հասավ մեր վորջ սոցիալիստական շինարարության մեջ ինչպես քաղաքում, այնպէս ել գյուղում: 1929 թ. ամռանը նշվեց արտասական բեկում դյուզի կյանքում, գյուղատնտեսության զարդացման մեջ, հետեւաբար նաև մեր ամբողջ յերկրի կյանքում:

Այդ բեկումն արտահայտվեց այն բանում, վոր գյուղացիության՝ միջակի հիմնական մասսաները վիճական շրջադարձ կատարեցին կողմնական արտադրությունների կողմը, սոցիալիզմի կողմը: Միջակը չքավորի հետեւ գնաց կոլտնտեսությունները, դրանով իսկ մասսայական բնույթ առավել կոլտնտեսական շարժմանը:

«Կուսակցության նվաճումը, — գրում եր ընկ. Ստալինը Հոկտեմբերյան հեղափոխության 12-րդ տարեդարձին, — նրանումն ե կայանում, վոր մել հաջողվեց մի ամբողջ շարք շրջաններում գյուղացիության հիմնական մասսաներին շուր տալ զարգացման հին, կապիտալիստական ուղղուց, — վորից շահում են լոկ մի բուռը հարուստ կապիտալիստներ, իսկ գյուղացիների վիթխարի մեծամասնությունն ստիպված ե տառապել աղքատության մեջ, — դեպի զարգացման նոր, սոցիալիստական ուղին, վորը դուրս ե մղում հարուստ կապիտալիստներին, իսկ միջակ-ներին և չքավորությանը վերապինում ե նոր ձեռով, զինում ե նոր գործիքներով, զինում ե տրակտորներով և գյուղատնտեսական մեքենաներով, վորպեսդի նրանց հնարավորություն տա աղքատությունից և կուտակյայն ստրկությունից գուրս դալ հողի ընկերութիւն, կոլեկտիվ մշակման լայն ուղին: Կուսակցության նվաճումը նրանումն ե կայանում, վոր մել հաջողվեց այդ արմատական բեկումը կաղմակերպել գյուղացիության ներսում և մեր հետեւից տանել քավորության ու միջակների լայն մասսաներին, չնայած անհամատալի դժվարություններին, չնայած բռնոր և ամեն տեսակ մութ ուժերի կատաղի հակաղեցության, կուլակներից ու տերտերներից սկսած մինչև Փիլիստերներն ու աշուղուները»:

Կուսակցության XV համագումարի աղքարարած մասսայական կուսակցության լրգումն ընդունվեց գյուղացիական մասսաների կողմից, վորոնք ամուր համագնեցին կոլտնտեսական ուղու վրա, սոցիալիզմի ուղղու վրա:

Միջակի շրջադարձը դեպի սոցիալիզմ նախապատրաստված եր մեր սոցիալիստական զարդացման ամբողջ ընթացքով, կուսակցության ամբողջ նախընթաց քաղաքականությամբ: Այդ շրջադարձը նախա-

բաստված եր սոցիալիստական ինդուստրիայի բուռն զարգացումով: Մեր ինդուստրիան—վորջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման այդ ժամկը—շատ առաջ անցավ նախապատրագմյան մակարդակից: Բայց յեթե արդյունաբերության զարգացումն ընդհանրապես վիթխարի նշանակություն ունի գյուղատնտեսության համար, ապա միանդամայն բացառիկ նշանակություն ունեցավ հատկապես գյուղատնտեսական մեջնաները և տրակտորներ արտադրող ինդուստրիայի զարգացումը: Տարիեց-տարի աճեց մեր արդյունաբերության արտադրության գյուղատնտեսական մեջնաների քանակը: Գյուղամեջնաշնության արտադրանքը 1929 թվին հասավ 400 միլ. ոուրլու:


Գյուղացիության հիմնական մասսանների շրջադարձը կոլտնտեսությունների կողմը նախապատրաստված եր կուլակուրյան դեմ վիճականացներին պայմանավորությամբ, հացամթերութերի քաղաքականությամբ, հացամթերութերումները, վորոնք «կուլակային տնտեսությունները ուրին չքավոր-միջակային մասսանների վերահսկության ներքո»: Հենվերով չքավորության վրա, դաշնակցելով միջակի հետ, անողոք պայքար մղել կուլակության դեմ—կուսակցության ար լողունքի հետևողական իրազործումը կուլակային ազգեցությունից գուրս կորցեց և բանվոր դասակարգի շուրջը համախմբեց գյուղացիության հիմնական մասսաններին:

Գյուղի շրջադարձը կոլտնտեսությունների կողմը նախապատրաստված եր գյուղատնտեսական կոռպերացիայի զարգացումով, մի ձեւ, վորը ծանոթ ու հասկանալի յեր դյուզի ամենալայն մասսաներին, վորն անհատ գյուղացուն սովորեցնում եր կոլեկտիվ կերպով վարել գործը:

Վերջապես, գյուղացիության հիմնական մասսանների շրջադարձը սոցիալիզմի կողմը նախապատրաստված եր իին կոլտնտեսությունների ցանցով, կոլտնտեսություններ, վորոնք իրենց որինակով և աճումով մենատնտեսին ցույց ելին տալիս տնտեսության կոլեկտիվ ձեւերի առավելությունները, ինչպես նաև ամբողջ նորհրդային Միությունում սփոված, նորագույն մեքենաներով զինված խորհրդատեսությունների ցանցով, վորոնց փորձի հիման վրա անհատ գյուղացին հնարավորություն ուներ համոզվելու, թե ինչպիսի ուժ ու առավելություններ ունի

ԿԵՆՅԱՊԱՆ ԿՈՐԴԻ ԲԱՏԻՎ ՊԱՐԱ

ՀԱՂԹԱՆԱԿԸ



Կոլտնտչարժման աճումը
(տոկոսներով):

գուրզեց և բանվոր դասակարգի շուրջը համախմբեց գյուղացիության հիմնական մասսաններին:

նոր տեխնիկան, վորը մատչելի յէ միայն խոչոք, հանրայնացված տընտեսությանը:

Այս բոլոր պատճառների ազգեցության ներքո կոլտնտեսալին շարժումն աշխատավոր դյուլացիների առանձին խմբերի ու խամբերի շարժումից վերածվեց գյուղացիության միջնավոր հիմնական մասսաների շարժման: Մի ամբողջ շարք շրջաններում նոր համատարած կոլեկտիվացման բնույթ ստացավ: «Դրանով ել պետք ե բացարել այս հոկայի կարևորություն ներկայացնող փաստը, — ասում եր ընկ. Ստայական կարևորություն ներկայացնող փաստը, — ասում եր ընկ. Ստայական կարևորություն մարքսիստ ադրաբաղների կոնֆերենցիալը, — վոր կոլտնտեսային շարժումը, վորը հզոր, վերընթաց հացիայում, — վոր կոլտնտեսային շարժումը, վորը հզոր, վերընթաց հացիային ճնահյուսի բնույթ և ստացել, իր ճանապարհին սրբում տանում և կուլակի դիմագրությունը, ճանապարհ և հարթում գյուղում սոցիալիստական շնարարության համար»:

Կոլտնտեսային շարժման հոկայական աճումը, վորը մեզ հնարավորություն տվեց հացի կուլակային արտադրությունը փոխարինել կունտեսությունների և խորհանտեսությունների արտադրությամբ, հակակուլակային ալիքի աճումը գյուղում, — այս ամենը կուսակցությանը հնարավորություն տվեց կուլակության շահագործական ճգումնները ուսհմանափակելու և գյուղի կապիտալիստական ելեմենտներին դուրս մղելու քաղաքականությունից անցնել համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակության՝ վրավես դասակարգի վերացման քաղաքականությանը: Կուսակցությունը վճռական հարձակման անցավ կուլակության դեմ: Իսկ վճռական հարձակումը կուլակության դեմ, — ասում եր ընկ. Ստալինը, — նշանակում ե «քործի պատրաստվել և կուլակությանն այնպես հարվածել, վոր նա չկարողանա այլքո վոտքի կանդնել... ջախջախել կուլակությանը, վերացնել նրան՝ իբրև դասակարգ»: Դա նոր ձևով դրեց ապակուլակացման հարցը, ապակուլակացում, վորն սկսեց կիրառել վոչ թէ սոսկ վարչական ճանապարհով, այլ նենց իբրանց չխավոր-միջակային մասսաների կողմից, վորոնք կանգնել ելին սոցիալիզմի ուղղությամբ, վորոնք գնաւու ելին կոլտնտեսական ուղղությունների: Ապակուլակացումն սկսեց դառնալ կոլտնտեսությունների կազմակերպման և զարգացուցիչ մասը:

Համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա կուլակության փորսես դասակարգի վերացումն սկսեցին ընդդրկել շրջան-շրջանի, մարդ-մարդի հետեւց և վերջապես դարձան հողագործության վճռական ձեզ Խորհրդային Միության հիմնական գյուղատնտեսական շրջաններում (Միջին Վոլգա, Ներքին Վոլգա, Հյուսիսային Կովկաս, Ռուկայայի հարթակայր և այլն):

Միջակի շրջադարձը դեպի սոցիալիզմի ուղին, կուլակության վրագետն դասակարգի վերացման քաղաքականության անցնելը, սոցիալիստական հողագործության բնագավառում ձեռք բնալած վճռական հաջողությունները համաշխարհային-պատմական նշանակություն ստացան, վորովհետեւ նրանք ցուցյալ միջին, վոր իր դիմութատուրան իրազործող պրոլետարիատն իր կուսակցության ճշշտագագանության դեպքում ընդունակ և դեկալարել գյուղացիական հիմնական մասսաներին և նրանց ներդրավել սոցիալիստական շինարարության մեջ:

Աջ սոցիորունիստական սանահայրերը, վորոնք շատախոսում եյին ուժից վեր տեմպերի մասին, վորոնք վախենում եյին կուլակության գեղ ուղղված հարձակումից, հակահեղափոխական տրոցկիստները, վորոնք ձգնում եյին ապացուցել, թե գյուղացիությունն անընդունակ և պլուտարիատի հետ ձեռք-ձեռքի և նրա դեկալարությամբ աշխատելու տուշիալզմի կառուցման վրա, ջարդ ու փշուր յեղան: Կյանքը տապալեց արոցկիստների հակահեղափոխական տեսությունը, վերացվող կուլակության գործակալ աջ ոպորտունիստական գուշակությունները:

Կոլեկտիվացման համար մղվող ալայքարի ընթացքում տեղերի առանձին աշխատողների, առանձին կազմակերպությունների կումից թույլ արլիցին «Ճախ» խոտրումները: Փոխանակ գյուղացիներին կամացուրության հիմունքներով, որինակով և ցուցադրելով կոլտնտեսությունների ներդրավելու, նրանք սկսեցին կիրառել վախեցնելու, հարկադրման, վարչարարության միջնուեր, ընկան կոլեկտիվացման ուղղած թվերի հետեւց: «Դիգանտամոլությամբ» տարիվելով, նրանք վարչական ճանապարհով մանը կոլտնտեսություններն իրար եյին միացնում, արտելները փոխանցում եյին կոմունաների կանոնագրության: «Փլաստույտը հաջողություններից» վիթիարի վնաս հացրեց կոլտնտեսային շինարարության գործին: Ճնշման ներքո կոլտնտեսություններում գյուղացիներն սկսեցին դուրս գալ կոլտնտեսություններից: «Զախ» խոտրուները շահավետ զործ ելին կատարում կուլակի և նրա ագնութայից՝ աջ ոպորտունիզմի համար:

Կուսակցությունն ընկ. Ստալինի հոգվածներով («Դիխապտույտ հաջողություններից», «Պատամիան ընկեր կոլտնտեսականներին», մարտ 1930 թ.) և կե-ի հատուկ վորոշումներով սահմանադարձը «Ճախ» խոտրուներին, պնդեց, վոր կոլտնտեսությունները պետք և կառուցվեն կամավորության սկզբունքով: «Ճախի» առնելով առանձին հանրապետությունների, մարդերի և շրջանների բաղմաղուն պայմանները, Միության բոլոր մարդերը կումակցության կե-ի վորոշմանը բաժանվեցին յերեք խմբի՝ ըստ կոլեկտիվացման տեմպերի: Հյուսիսային վոլ-

կոտոր, Միջին և Ներքին Վոլգան, Ռէկրայնայի Հարթավայրը հիմնականում կոլեկտիվացումը պետք է ավարտելին 1931 թվին. մյուս հայտնատիկային մարդկարը (Կենտրոնական Սնահողային մարզ, Ռէկրայնի մնացած մտները և այլն) կոլեկտիվացումը պետք է ավարտելին 1932 թ. գարնանը, մնացածները՝ 1933 թվին:

Հաղթահարելով դասակարգային թշնամու դիմադրությունը, վընդուկան պայքար մդելով ոպորտունիզմի դեմ, կուսակցությունն ապահովեց կոլեկտիվացման հաղթանակը: Կուսակցության կենտրոնական կոմիտեյի վորոշումները դոհումակության համարիպեցին գյուղացիության հիմնական մասսաների կողմից:

ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲԱՑԱՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ

Սոցիալիստական հիմքի վրա գյուղացիական տնտեսության վերակառուցման և խորհանութեառությունների ծավալման տեմպերը դերադանցեցին այն ամենը, ինչ նշված եր հնգամյակով:

Հնգամյակով յնթաղը վու 1931 թվին կոլեկտիվացված ունենալ գյուղացիական տնտեսությունների 23%-ը, իսկ մենք արդեն 1932 թվի սկզբին կոլտնտեսություններում ունեցինք գյուղացիական տնտեսությունների 60%-ից ավելին:

Յերկրի հիմնական գյուղատնտեսական շրջաններում (Հյուսիսային Կիւտա, Ռէկրայնա, Պոլուժին և այլն) հիմնականում ավարտված է համատարած կոլեկտիվացումը և այդ հիմունքրա կուլակության վրագիտ վրացումը: 1932/33 թվին հիմնականում ավարտված է Խորհրդային Միության համատարած կոլեկտիվացումը:

Դեռ վոչ շատ ժամանակ առաջ, կուսակցության XVI համագումարի մոմենտին (1930 թ.), սոցիալիստական սեկտորը ԽՍՀՄ-ի ցանքատարածության 32,4%-ն եր գրավում միայն: Իսկ 1932 թ. գարնանը սոցիալիստական սեկտորը (խորհանութեառությունները և կոլտնտեսությունները) վարեց գարնանացան տարածության 80,4%-ը:

1928 թվին խորհանութեառությունները և կոլտնտեսությունները տալիս եյին գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի 1,8%-ը, իսկ 1931 թվին նրանք տվին արդեն գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի 74%-ը: Սոցիալիստական սեկտորը գյուղատնտեսության մեջ հաստատակես գերակշռող տեղ գրավեց: 1929 թվին, այսինքն՝ հնգամյակի սկզբին կուլակային տնտեսությունները տալիս եյին ապրանքային հացի 20%-ը, իսկ 1931 թվին՝ արդեն 4%-ը միայն:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործութ

ձեռք բերված այս վիթխարի հաջողություններին ուղեկցեց ցանքատարածության ուժեղ անսումը, լքված և խոպան հողերի ոգտագործումը, վորոնց մշակումն անմատչելի յե մանր, անհատական գյուղացիական տնտեսությանը: ԽՍՀՄ ցանքատարածությունները՝ նախապատրազման ցանքատարածություններին համապատասխան միաժամկետ միաժամկետ առաջին ընդունության մասնամեծ ընդարձակման ինդրի լուծումը պետք է կատարված համարել:

Բայց ինքնին հասկանալի յե, վոր լոկ ցանքատարածությունների ընդարձակմամբ գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման խնդիրը չի լուծվում: Գործի առանցքը ներկայումս նրանումն է կայանում, վոր ամենալայն պայքար ծավալվի գյուղատնտեսական արտադրության վրակը բարձրացնելու համար, այն ե՝ հողի լավագույն մշակման, ցանքատիպության արժմատացման, լավ տեսակի հացատիկ ցանելուն անցնելու, ցանքսերի լավագույն ինսեմքի, առանց կորուստի բերքահավաքման համար, յերաշտի դեմ պայքարելու, բերքատվությունը բարձրացնելու համար:

Այս հարցի առթիվ կե-ի և Ժողկոմիորհի ընդունած հատուկ վորոշման մեջ ասվում է. «Հասել է ժամանակը, յերբ ցանքատարածությունների ընդարձակման միջոցով տնտեսությունն ընդլայնելուց անհրաժեշտ է շրջադարձ կատարել՝ պայքարելու հողի լավագույն մշակման համար, պայքարելու բերքատվության բարձրացման համար՝ վորպես գարզացման տվյալ ստադիայում գյուղատնտեսության բնագավառի գլխավոր ու կենորոնական խնդրի»: Խոսքն այսուել ընթացիկ միջոցառումների վորոշ գումարի մասին չե, այլ կոլտնտեսային ու խորհանութեառյին արտադրության ղեկավարման գործում արմատական շրջադարձի անհրաժեշտության մասին: Ահա թե ինչո՞ւ կե-ի և Ժողկոմիորհի նույն վորոշմամբ վորոշվեց 1933 թ. պլանում դադարեցնել շարահերկ ու տեխնիկական կուլտուրաների (իբրև ամենից ավելի շատ աշխատանք պահանջող կուլտուրաների) ցանքատարածությունների հետագա ընդարձակումը՝ բանվորական ուժի և քարոզ ուժի գերարեւումից խուսափելու համար, նպատակահարմար գտնելով լոկ հացահատիկային ցանքատարածությունների ընդարձակումը և ամբողջ աշխատանքի վերափոխելով բոլոր կուլտուրաների բերքատվության բարձրացման ուղղությամբ:

Այս խնդրի լուծումը մատչելի յե միայն խոչոր, սոցիալիստական գյուղատնտեսական արտադրությանը, վորը վերացնում է հողային

ժիջասահմանները, զինվոր և մեքենայական տեխնիկայի նորագույն նվաճումներով:

Իլին ասում եք, վոր յերկրում 100 հազար տրակտոր ունենալու դեպքում միջակը կոլտնտեսություն կմտնի: Ենինյան այդ ձգտումն երադործված ե և գերազանցված: Յեթև 1929 թ. հունվարի 1-ին ԽՍՀՄ գյուղատնտեսության մեջ աշխատում ելին 29 հազար տրակտոր, 1800 ավտոմոբիլ, իսկ կոմբայն չկար և վոչ մի հատ, առաջ 1932 թ. հունվարի 1-ին արդեն աշխատում ելին 146 հազար տրակտոր (3½ տարում աճում համարյա 5 անգամ), 10 հազար ավտոմոբիլ (աճում ավելի քան 3 անգամ) և 10½ հազար կոմբայն:

Գյուղատնտեսության զանազան ճյուղերի խորհումներում—հացահատիկային, անասնական, քամբակացան և այլն—աճում են քանակակես և ծավալով, վաղուց անցել են ամենափոշոր ամերիկական հողադործությունից: «Բայց,—ասում ե ընկ. Ստալինը,—ոխալ կլիներ մեր խորհումնեսությունները դիտել վորպես մի-միայն հացի ուսուցուելի աղբյուր: Իրականության մեջ խորհումնեսություններն իրենց նոր տեխնիկայով, շրջապատի գյուղացիներին իրենց ցույց տված ողնությամբ, իրենց չտեսնված տնտեսական թափով հանդիսացան այն առաջատար ուժը, վորը հեշտացրեց գյուղացիական մասնակիությունը և նրանց շարժեց գեղալի կոլեկտիվացման ուղին: Խորհումնեսությունները գյուղատնտեսության սոցիալիստական վարկառուցման վորհաշարն են:

Խոշոր խորհումնեսությունների ծավալման սկզբից անցած 4 տարիների ընթացքում ձեռք են բերված վիթխարի հաջողություններ. հացահատիկային խորհումնեսությունները ներկայումս ունեն 12 միլիոն հեկտար հողամաս. մոտ հազար հինգ հարյուր անասնապահական խորհումնեսություններն իրենց ձեռքն են կենտրոնացրել միքանի միլիոն գլուխ տնասուն: Բայց խորհումնեսությունների աշխատանքի և նրանց դեկավարան մեջ կան զգալի թերություններ, վորոնք գալիս են գըլիսավագես վորակական ցուցանիշների համար անբավարար չափով, պայքարելու, ազրոտեխնիկայի «ձախ» թերագնահատման, կորուսների և անտիբակարության դեմ թույլ պայքարելու գծով: Խորհումնեսություններում յեղան նաև բուրդուական տենդենցների դրսեւումներ, «իր» տնտեսության շահերը պրոլետարական պետության շահերին հակադրելու փորձեր (հացը ժամանակին պետությանը չհանձնելը, ուղղուած անձնունմիելի ֆոնդեր ստեղծելը և այլն):

Խորհումնեսությունների դեկավարությունն ուժեղացնելու և բարելավելու նախառակով խորհրդական կամավարությունը վորոշեց Հովհանքամատի տիտանից արանձնացնել հացահատիկային և անասնապահ-

հական խորհումնեսությունները, ստեղծելով Խորհումների համառուկ ժողկումատ, վորի ամենաառաջին պարտականությունն ե հանդիսանում դիմավորել մասսայական արշավը խորհումների արտադրական վորակի համար:

Տրակտորաշինության, կոմբայնաշինության, գյուղատնտեսական մեջնաների արտադրության հիման վրա մեզ մոտ ծագում առավ քաղաքի և դյուղի, սոցիալիստական ինդուստրիայի և կոլեկտիվացված գյուղատնտեսության արտադրական զողման ուշագրավ ձևը: Դա մեջնատրակտորային կայանեներին են (ՄՏԿ), վորպիսին կուսակցության XV համագումարի ժամանակ հաշվուում եր ընդամենը մեկ հատ, իսկ 1932 թվին՝ 2200 հատ:

Հողի լավագույն մշակման և բերքատվության բարձրացման համար պայքարելու ուղղությամբ ՄՇՁԱՐԾ կատարելով, առանձնապես պատասխանատու խնդիրներ են դրվում մեջնատրակտորային կայանների վրա, վորպիս կոլտնտեսային արտադրության կազմակերպիչների և առաջամարտիկների: Մեջնատրակտորային կայանները, ասկած ե բերքատվության համար պայքարելու մասին կե-ի և ժողկոմխորհի ընդունած վորոշման մեջ, «պետք ե-կոլտնտեսությունների զեկավարները լինեն վոչ միայն տրակտորային տեխնիկայի կիրառման բնագավառում, այլև ազրոնմիայի բնագավառում»: ՄՏԿ-ները վարձակայան չեն: ՄՏԿ-ի խնդիրն ե վոչ միայն կոլտնտեսություններն ապահովել մեջնաներիկան քարչով, վոչ միայն հմտորեն զուգակցել տրակտորը և ձին, այլ և զեկավարել վողջ աշխատանիքի կազմակերպումը կուսակտությին արտադրության մեջ, զեկավարել նրա ազրությունիկան (Հողի մշակման վորակը, պարարտանյութերի գործադրությունը, բարձր յեկամուտ տվող կուտարանների արմատացումը, փորձառական գործը և այլն): Հանձնի ՄՏԿ-ների մենք ունենք պրոլետարիատի և գյուղացիության զողման լավագույն դրսեւումը, գյուղացիական լայն մասսաներին կուսակտության արտադրության շուրջը համախմբելու լավագույն յեղանակը:

Կոլտնտեսական դարձել ե հողագործության կենտրոնական դեմքը, գյուղատնտեսական արտադրանքների հիմնական արտադրությունը, խորհրդային իշխանության իրական և ամուր հենարանը գյուղում: Բանվոր զասակարգի և գյուղացիության զողման ամրացման լենինյան խնդիրը ներկայումս զգալի չափով հանդիսանում է արդեն կոլտնտեսական գյուղացիության հետ արտադրական զարում կատարելու խորհրդական պարունակությունը:

Սոցիալիզմի հաղթանակները գյուղատնտեսության մեջ լուծեցին պրոլետարական հեղափոխության ամենակարևոր և ամենագլուխարին:

ինդիքը՝ գյուղատնտեսության ողջավատական վերակառուցման խնդիրը։ Ենինյան «ով-ու» հարցը լուծված ե ընդդեմ կավիտալիզմի և ի նպաստ ողջավագմի լիովին և անվերադարձ կերպով վոչ միայն քաղաքում, այլև գյուղում։

3. ԿՈԼՏՆԵՍՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՐԱՑՈՒՄԸ ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ Ե Ի՞Չ Ե ԳՅՈՒՂԱՏՆՏԵԱԿԱՆ ԱՐՏԵԼԸ

15 միլիոն գյուղացիական տնտեսություններ գնացին լինինյան կոռպերատիվ ռեղիով։ 1932—1933 թվականների ընթացքում համատարած կոլեկտիվացումը հիմնականում կավարտվի։ Գյուղացիության հիմնական չքավոր-միջամային մասսաները կմիանան գյուղատնտեսական արտելներում։

Ինչո՞ւ հենց արտելներում։ Ինչո՞ւ գյուղացիությունը կոլեկտիվ տնտեսությունների բոլոր ձևերից ընտրեց արտելը և վոչ թե կոլեկտիվ տնտեսությունների մի այլ ձև, որինակ, կոմունան։

Ինչո՞ւմն և արտելի և կոմունայի տարրերությունը։

Արտելում նրա անդամները վարում են հանրային տնտեսություն, բայց գրանից բացի արտելի առանձին անդամները կարող են ունենալ նաև իրենց անհատական տնտեսություն՝ լորպես ոժանդակ տնտեսություն։ Արտելում հանրայնացվում են արտադրության հիմնական միջոցները, բանող անասունը, մեքենաները, տնտեսական շենքերը։ Սակայն արտելի առանձին անդամներն անհատական ողտագործման համար ունեն կով, մանր անասուն, ընտանի թուզուն, բնակելի շենք և այլն։ Ելդ անհատական տնտեսությունը լրացուցիչ տնտեսություն և հանրեսանում այն հանրային տնտեսությանը, վորին մասնակցում և արտելի անդամը։

Կոմունան արտելից հիմնականում նրանով և տարբերվում, վոր այնաղ հանրայնացված և ամբողջ տնտեսությունը (և վոչ թե միայն դաշտավարությունը), վոր այնտեղ վերացվում և կոլտնտեսականների անհատական լրացուցիչ տնտեսության գոյության հնարավորությունը։

Արտելին անցնելու մեջ են հանդիսանում հողի համատեղ մշակման ընկերությունները (գյուղական ընկերություններ)։ Այնտեղ արտադրության միջոցները միասնաբար ողտագործվում են միայն դաշտային աշխատանքների ժամանակ։ Հողի համատեղ մշակման ընկերություններում ծփու կամ գութանի տերը մնում և առանձին գյուղացին, արտադրության միջոցները չեն հանրայնացվում։ Դրա համար ել այլ

ընկերություններում յեկամուտների բաշխումը ևս կատարվում է հանրային աշխատանքին մասնակցող անդամի գույքի չափին համապատասխան։ Իսկ արտելում յեկամուտի բաշխումը կատարվում է ըստ աշխատանքի։

Գյուղացին ընտառից գյուղատնտեսական արտելը, վրուվնետև արտադրության հիմնական միջոցները հանրայնացնելով հանդիրձ՝ նա միաժամանակ հնարավորություն և ստուգում ունենալու յերկրորդական, լրացուցիչ անհատական տնտեսությունն հենց այդ գուգորդման շնորհիվ ել ուժեղ և գյուղատնտեսական արտելը։



Հայումայիկի ընթացքում կոռուպացիայի անդամների քանակն ավելացել և ավելի քան 81/2 անգամ (միլիոններով)։ Մեր կուսակցությունը հաստատապես և բաղմից մասնաշել ե, վոր կոլտնտեսական արտելը տվյալ մումբնում, տվյալ ետապում հանդիսանում է հիմնական ողակը կոլտնտեսային շարժման սիստեմում, նրա գլխավոր և հիմնական ձեռ։ Վոչ թե հողի համատեղ մշակման ընկերություն, վոչ թե կոմունա, այլ հենց գյուղատնտեսական արտելն առաջարկեցին և հենց օրան ընդառաջեցին աշխատավոր գյուղացիության ամենալայն մասսաները։ «Գյուղատնտեսական արտելի ուժը նրանում է, վոր նա ավելի մատչելի յև գյուղացիական լայն մասունքների գիտակցությանը»։

Մենատնտես գյուղացիության առանձին խմբերը, վորոնք ամենից ավելի քիչ են պատրաստված կոլտնտեսություն մանելու, առաջին շրջանում կանգ են առնում հողի համատեղ մշակման ընկերության վրա։ Վորպես կոլտնտեսային շարժման ստորին աստիճանի։ Կոլտնտեսական գյուղացիների ամենից ավելի առաջավոր, ամենից ավելի հանրուհն պատրաստված, կոռպերայման, գյուղատնտեսական արտելի համատեղ աշխատանքի մեծ փորձով անցկացած խմբերն իրենց համար հնարայի վոր են համարում կոլտնտեսային շարժման բարձրագույն աստիճանը։ Կոմունան։ Բայց կուսակցությունն ամբողջ վճռականությամբ հարվածում է աջ ոպորտունիսներին, վորոնք փորձում են գյուղացիությանը բությունը զարձնել կոլտնտեսային շարժման հիմնական ձեռ։ Կուսակցությունն ամբողջ անողոքությամբ հարվածում է նաև «ձախ» խոռոշիներին, վորոնք փորձում են ցատկել գյուղատնտեսական արտելի վրայով և հակառակ աշխատավոր գյուղացիների կամքին, հակառակ

ԳՅՈՒՂԱԾՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԻՊ Ե

Գյուղատնտեսական արտելը, վորը ցույց է տալիս, թե ի՞նչպիսի բույր առավելություններ ունի կոլեկտիվ հանրային տնտեսությունը, ի՞նչպես են այնտեղ բարձրանում աշխատանքի արտադրողականությունն ու բերքատվությունը, ի՞նչպես ե այնտեղ հեշտանում գյուղացիական աշխատանքը, ինչպես ե ավելանում յեկամուտը և բարձրանում յուրաքանչյուր կոլտնտեսականի բարեկեցությունը, — հանդիսանում է ինչոր սոցիալիստական տնտեսության դպրոց, նոր հանրային կարգապետության դպրոց, գյուղացիներին սոցիալիստական շինարարությամբ փարձեցնելու դպրոց :

Գյուղացիության չքավորմիջակային մասսաներն արտել են մըտնում իրենց չին սեփականատիրական սովորութներով, նրանց մնացուրդներով։ Հնի մնացորդները կոլտնտեսություններում գրսնորդում են զանազան ձևերով։ Այլտեղ կան և՝ առանձին կոլտնտեսությունների շուները պրոցեսարական սկետության շահերին հակադրելու փորձեր. և յեկամուտներն ըստ չնչի բաշխելու սկզբունքի պահպանման ձգտում. և՝ գժիկամակություն՝ յենթարկվելու նոր աշխատանքային կարգապահության վորը խոչըր, հարայնացված տնտեսության գոյության անհամարեցած պայմանն է հանդիսանում. և՝ կոլտնտեսական գույքի հափշտակամները ու գողացումներ։ Հենց դրա համար ել արտելու միայն իսկական ձևով սկսվում է գյուղացիության վերադաստիքական գործը։ Բազմաթիվ՝ սերունդներից ժառանգված մանրսեփականատիրական հոգեբանության, մասնավոր-տնտեսական կուտակման ծարավի վերացման խնդիրը դժվարին ու յերկարատե խընդիր է։

«Հապկավոր ե դեռ շատ աշխատել, — ասում է ընկ. Ստալինը, — կոլտնտեսական գյուղացուն վերակառուցելու, նրա ինդիվիդուալիստական հոգեբանությունն ուղղելու և նրան սոցիալիստական հասարակության խոկական աշխատող դարձնելու համար։ Յեկ դա այնքան շուտ կարվի, վորքան շուտ կալտնտեսությունները կմեքենայացվեն, վորքան շուտ տրակտորիզացիայի կենքարկվեն։»

Գյուղատնտեսական արտել գյուղացիների կամավոր հանրային միավորություն է, վոր ստեղծվում է հենց իրենց՝ գյուղացիների միջոցներով։ «Կոլտնտեսությունները, — հայտարարեց ԽՍՀՄ խորհուրդը VI համագումարը, — այսպիսի ձեռնարկություններ են, վոր գիրներ են գյուղացիների կողմից, վորոնք կամովին հանրայնացնում արտադրության իրենց միջոցները և իրենց տնտեսությունը վարում

ան պետությանը պատկանող հողի վրա։ Բնդ վորում կոլտնտեսության տերերը հանդիսանում են կոլտնտեսականները։»

Ուստի հակալենինյան ե ամեն մի փորձ, վոր արվում ե խորհացնուեսությունների ղեկավարման և կառավարման մեթոդները կոլտնտեսություն փոխադրելու ուղղությամբ։ Խորհանտեսությունը պետական ձեռնարկություն է, վոր ստեղծված ե պետության միջոցներով։ Խորհանտեսությունում պետությունն ե տերը։ Իսկ կոլտնտեսության տերը կոլտնտեսականներն են։ Կոլտնտեսության նկատմամբ բռնություն, մերկ վարչական հարկադրում գործադրելու, կոլտնտեսականների ընտան զեկավարներին կոլտնտեսություններից կամայական կերպով աշխատանքից հանելու ամեն տեսակ փորձերը ջուր են լցնում կուլակի և ապօրտունիստի ջրաղացին։

Սակայն ճի՞չ տ ե արդյոք այն պնդումը, թե կոլտնտեսությունները սոցիալիստական ձեռնարկություններ են։ Չե՞ վոր դեռ մինչև այժմ ել դուրս չեն նետվել Տրոցկու մտքերը սերտածները, վորոնք հիմնվելով այն բանի վրա, վոր կուտակցությունը և կառավարությունը խնդիր են դնում, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա հանրայնացված տնտեսությունից դուրս լրացուցիչ անհատական տնտեսություն (կով, վոչսարներ, թռչուն, անամերձ բանջարանոց), վոր կոլտնտեսականը դրսում ունենա հավելյալ վաստակ (իր սեփական արտադրանքի վաճառքից և այլն)՝ պնդում են, թե արտելը տնտեսության սոցիալիստական տիպ չե, թե այլպիսի տիպ ե անպայման խորհանտեսությունը և այդպիսին կարող ե լինել միայն կոմունան։

Գյուղատնտեսական արտելի՝ իրեն սոցիալիստական ձեռնարկության պարզ, մատչելի ձեկ՝ այդպիսի «ձախ» վարկարեկմանն ընկ. Ստալինը դեռ յերեք տարի առաջ տվել է ամենասանողոք բայլշենիկիան հակառակած։

«Ինչո՞վ ե բնորոշվում տնտեսության տիպը, — հարց ե տալիս ընկ. Ստալինը։ Ակնհայտ ե՝ վոր մարդկանց հարաբերություններով արտադրության պրոցեսում։ Ել ուրիշ ինչո՞վ կարելի յե բնորոշել տնտեսության տիպը։ Բայց մի՞ք է կոլտնտեսությունն կա արտադրության միջոցների սեփականատեր մարդկանց դասակարգ և արտադրության այդ միջոցներից գուրի մարդկանց դասակարգ։ Մի՞ք է կոլտնտեսությունն կա շահագործողների դասակարգ և շահագործվողների դասակարգ։ Մի՞ք է կոլտնտեսությունը չի ներկայացնում արտադրության ինմանական գործիքների հանրայնացում՝ նույն պետությանը պատկանող հողի վրա։ Ի՞նչ եթե կա պնդելու, թե կոլտնտեսությունները, վորպես տնտեսության տիպ, չեն ներկայացնում սոցիալիստական տնտեսության ձեւերից մեկը։»

Միայն հակառեղափոխական տրոցկիստներն են, վորոնք ցանկանալով արտափորել, պատկագերծ անել սոցիալիստական հողագության հաջողությունները, կարող են անդել, թե կոլտնտեսությունը հողագործության սոցիալիստական ձև չե, իբրև թե այն հիման վրա, վոր կոլտնտեսականները լրացուցիչ անհատական տնտեսություն ունեն:

Արտելի դասակարգային բնույթը չի վորոշվում այն բանով, վոր կոլտնտեսականը կով ե պահել կամ ձեռք բերել և ցանել ե իր տնամերձ բանջարանոցը: Եյականն այն ե, վոր տնտեսության հիմքը՝ դաշնակարությունը, արտադրության հիմնական միջոցները, մեքենաները և բանդ անառումը հանրայնացված են: Եյականն այն ե, վոր արտադրության այդ հանրայնացված միջոցներով կոլտնտեսականներն աշխատում են պիտի կողի վրա արտադրության շարունակ ավելացող պիտակն միջոցների ողնությամբ: (արակոսորներ, բարդ մեքենաներ, մեքենա-տրակտորային կայաններ):

Ահա թե ինչու արտելը վարկարեկելու «Ճախ» փորձերը, այն խոսակցությունները, թե կոլտնտեսությունը տնտեսության սոցիալիստական ձև չե, կոլտնտեսությունների հասցեյին ուղղված հակառեղափոխական տրոցկիստական դրամարտակի կրկնություն են հանդիսանում:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ ԿԱ՞ ԱՐԴՅՈՒՔ ԿՈՂԾՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՒՄ

Երեկովա մենատնտեսներին միավորող արտելում, իհարկե, մնացել են ժամանափրական ինդիվիդուալիստական մնացորդներ և կուլակային ազգեցություններ—ավելի շատ ստանալ, ավելի քիչ բան անել, անփույթ վերս սերմունք ցույց տալ կոլտնտեսության ունեցվածքներն, կոլտնտեսության ձիռն և մեքենային, գողություն անել և այլն: Բայց ինչքան ավելի յե զարգանում կոլտնտեսությունը, ինչքան ավելի յե ամրանում, ինչքան ավելի լավ են կատարվում կուսակցության և կառավարմթյան գերեկտիվները կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրացման մասին, ինչքան ավելի յեն նրանք մեքենացորդները:

Հարկավոր ե ամենաանխնա պայքար մղել կուլակային այն փորձեցի կեմ, վորոնք նպատակ ունեն վարկաբեկել, վիժեցնել կոլտնտեսական առևտուրը կամ ողբագործել այդպիսին իր չարաշահական նպատակների համար: Խորհրդային դատարանը պետք է խստիվ պատժի նրանց, ում խելքին կիշի բանի տեղ չգնել խորհրդային որենքները մասնավոր առևտրականների, վերագնորդների, սպեկուլյանտների կողմից խանութներ և կրակներ բացել չթույլատրելու մասին: Կառավարության հատուկ վորոշումով (1932 թ. ոգոստոսի 22-ին) առաջարկվում եր «սպեկուլյանտներին և վերագնորդներին մեկուսացնել կոնցենտրացիոն լագերներում 5-ից մինչև 10 տարի ժամանակով, առանց ամենիստիս կիրառելու իրավունքի»:

Հարկավոր ե ամեն միջոց զործադրելով աշխատել իշեցնել չափից դուքս բարձր գմբերը կոլտնտեսական շուկայում, արմատախիլ անելով սպեկուլյացիան, շուկայից վտարելով այն պետական և կոռպերատիվ մթերողներին, վորոնք ուղղնում են գները, դրանով նպաստելով սպեկուլյանտներին, դասակարգային թշնամիներին:

ՍՐԲԱԶԱՆ ՅԵՎ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱ-
ՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սոցիալիզմի գիրքերի ամրացման համար մղվող պայքարում միանգամայն բացառիկ նշանակություն ունի Խորհրդային կառավարության 1932 թ. սուստոսի 7-ի գեկրետը «Պետական ձեռնարկությունների, կոլտեխնուրարյունների ու կոռպերացիայի գույքի պահպանման և հանրային (սոցիալիստական) սեփականության ամրացման մասին»:

կապիտալիզմի որենքները, բուրժուական պետության ամբողջ ապահովատն ուղղված են մասնավոր սեփականության պահպանման և պաշտպանության կողմը։ Ընդ վորում կապիտալիստական կառույց

նրանց բարքերն ու սովորույթները թաղյնում են խոշոր համշտակիչ։
ներին, ճարպիկ ժուլիկներին, հարուստ պորտաքույջներին, նշանավոր
իուլիդաններին, վորոնք թալանում են աշխատավորներին, կողոպտում
են գանձարանը, հարստանում են թալանի և բռնության ճանապարհով։

Մեզ մոտ լիկվիդացիայի յենթարկված շահագործող դասակարգերի
մասցորդները փորձում են իրենց ունակություններն ու սովորույթները
փոխադրել մեր կարգերը և կիրառել խորհրդային կարգերի հիմքը
կազմող հանրային, սոցիալիստական սեփականության նկատմամբ։
Ազգարնակչության ամենալայն մասսաների գիտակցության մեջ պետք
է արմատացնել, վոր պետական դույքը, կուտնաեսությունների գույր
և կոռպերատիվների սեփականությունը սրբազն են և անձեռնմխե-
քը, կոռպերատիվների սեփականությունն է հանդիսանում։

Լենինը գրել է. «Հարուստները և ժուլիկները սոցիալիզմի գլխա-
վոր քշնամիներն են։ Այդ քշնամիներին պետք է վերցնել ամրող ազ-
գարմակչության հատուկ ինկոդուրյան ներքո, նրանց պետք է անխնա-
պատժել սոցիալիստական հասարակության կանոններն ու որենիներն
ամենափոքր չափով անգամ խախտելու դեպքում։ Ամեն մի թուլու-
ամենափոքր չափով անգամ խախտելու դեպքում։ Ամեն մի սանտիմենտուալ վերաբերմունք
թյուն, ամեն մի տատանում, ամեն մի սանտիմենտուալ վերաբերմունք
այդ տեսակետից մեծապույն հանցաղործությունը կլիներ սոցիալիզմի
առաջ։»

1918 թվին Գիտերի բանվորներին ուղղած իր նամակում Լենինը
գրում եր. «Եյալիսի ժամանակում—իսկ բուն կոմունիստական հասա-
րակության համար այդ ճիշտ և շարունակ—յուրաքանչյուր փութ հացն
ու վառելանյութն իսկական սրբություն է, ավելի բարձր այն սրբու-
թյուններից, վորոնցով հիմարների գլուխն են լցնում տերտերները, վո-
րոնք յերկրային ստրկությանն ի վարձատրություն խոստանում են
յերկնային թագավորությունը։»

Բանվորների և դյուլացիների միլիոնավոր մասսաների մղած
անձնազու պայքարի տասնհինգ տարիներում Խորհրդային յերկիրն ամ-
րագես հաստատվեց սոցիալիստական ուղղու վրա, հանրային սոցիա-
լիստական սեփականությունը տիրապետող դարձավ։ Յեզ ինչքան ա-
վելի նշանակալից են սոցիալիզմի նվաճումները, այնքան ավելի սուր
է հին, պարտված հասարակության խորտակվող ելեմենտների դիմա-
գրությունը։ Դասակարգային թշնամին վոտնձգություն և անում հան-
դրային բարիքի դեմ, նա փորձում է կողոպտել աշխատավորներին, գո-
ղանակ կոլտնտեսականից, հափշտակել, փչացնել կոլտնտեսական գույր
քը։ Դասակարգային թշնամին—սպեկուլյանտը, նախկին շահագործո-
քը—հափշտակում է սոցիալիստական սեփականությունը յերկաթու-
զում, պետական խանութում, կոռպերատիվում։

Այս թե ինչո՞ւ Միության կենտրոնացրելով և Ժողկոմիորհն ոգոս-
տուի 7-ի դեկտեմբեր հայտարարեցին, վոր համբային սեփականու-
թյունը (պիտական, կորանտեսական, կոռպերատիվ) խորհրդային
կարգերի հիմքն և համբխանում, վոր նա սրբազն է ու անձեռնմխե-
լի, և այն մարդիկ, վորոնք վոտնձգություն են անում հանրային սե-
փականության դեմ, պետք է դիտվեն վորպես ժողովրդի թշնամինը,
վորպիսի նկատառումով և վենական պայքարը հանրային գույքը հա-
մշտակողների դեմ խորհրդային իշխանության որդանների առաջնա-
գույն պարտականությունն է հանդիսանում։

Այս դեկտեմբեր հրահանդում է կոլտնտեսական և կոռպերատիվ
դույքը հափշտակելու ինչպես նաև յերկաթուղային և ջրային արանս-
պորտում բնուների հափշտակում կատարելու համար կիրառել ացցիա-
լական պաշտպանության բարձրագույն միջոցը՝ դնդակահարությունը,
բռնագրավելով ամբողջ գույքը և մեզմացուցիչ հանգամանքներ լինե-
լու դեպքում զնդակահարությունը փոխարինելով 10 տարուց վոչ պա-
կան աղատաղրկումով՝ գույքի բռնագրավումով հանդերձ։

Պրոլետարական պետությունը չի խնայելու ժողովրդի այն թշնա-
միներին, սոցիալիզմի թշնամիներին, աշխատավորության թշնամինե-
րին, վորոնք վոտնձգություն կանեն հանրային, սոցիալիստական սե-
փականության դեմ։

Ցուրաքանչյուր կուսակցական կազմակերպություն, յուրաքան-
չյուր բայլէկիկ, առաջավոր բանվոր պետք ե լայնորեն բացատրի ամ-
բողջ աշխատավորությանը խորհրդային իշխանության այս որենքի
նշանակությունն ու իմաստը։ Աչալը օրեն պահանել հանրային բա-
րիքը, չափշտակել, այլ բազմացնել սոցիալիզմի ֆոնդերը, ողնել
խորհրդային իշխանության որդաններին՝ յերեան հանելու և պատժելու
սպեկուլյանտներին, ժողովրին, գողերին, պրոբարույժներին—
այդպիսին և յուրաքանչյուր աղնիվ խորհրդային քաղաքացու պարտա-
կանությունը։ Աշխատավորության հեղափոխական աշալը ջությունը
պետք է ուղղված լինի դեպի հանրային սեփականությունը դասակար-
գային թշնամիների գողությունից և հափշտակությունից պաշտպանե-
լու կողմը։

Այս որենքը հեղափոխական կիրառումը, ինչպես և ամեն մի հեղա-
փոխական որինականության ամբացումը, պրոլետարական դիկտատու-
րան ամբացնելու, բանվորների ու աշխատավոր գյուղացիների շահերը
պաշտպանելու և աշխատավորության դասակարգային թշնամիների
դեմ պայքարելու կարեռադույն միջոցներից մեկն և հանդիսանում։

«Անհրաժեշտ է ամենախիստ հեղափոխական կարդ պահպանել,—

ասում եր Լենինը :—Անհրաժեշտ է սրբորեն պահպանել խորհրդային իշխանության որենքներն ու հրահանգները և հետեւ, վոր նրանք կատարվեն բոլորի կողմից» :

卷之三

Հնդամյակի չորրորդ, ավարտական տարվա վերջը գուշադիպեց Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն, համաշխարհային նշանակություն ունեցող 15-րդ տարեդարձին։ Այդ մեծագույն տարեդարձը լավագույն աղացույցն է խորհրդային կարգերի, սոցիալիզմի կարևորագույն ամրության և անխորտակելիության։ Նա մասսաներին ե'լ ազերի ամրության և անխորտակելիության։ Նա մասսաներին մ'լ պելի պետք ե համախմբի սոցիալիստական մրցման և հարվածայնության ծավալուն դրոշի ներքո, վորպեալի, վերցնելով առաջին հնդամյակի վերջին դիրքերը, միլիոնների նոր, ե'լ ավելի աճած կազմակերպության մեջության մասնակի սոցիալիզմի հնդամյակի կարպված ուժով օկսիլի յերկրորդ հնդամյակի՝ սոցիալիզմի հնդամյակի կառուցումը։

Սոյիալիզմի կառուցման դործին նվիրված այդ միավոնների սահմանական բնկ։ Ստալինն ասում էր.

«Արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի և պրակ-
տիկ գործունեցությունն է: Մեր արտադրական պլանի ռեալ լինելը,
դա նոր կյանք ստեղծող միլիոնավոր աշխատավորներն են: Մեր ծրա-
գի ռեալ լինելը, դա կենդանի մարդկին են, մենք ենք ձեզ
հետ միասին, մեր աշխատելու կամքը, նոր ձևով աշխատելու մեր
պատրաստակամությունը, պլանը կառարելու մեր վճռականությունը:
Մենք ունենք արդյոք այդ վճռականությունը: Այս՝ ունենք: Ուրեմն
մեր արտադրական ծրագիրը կարող է և պետք է իրագործվի»:

ՀԱՅԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀՆԴԱՄՅԱԿԸ

ԱՐԵՎԱԿԱՐԴ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ

Առաջին հնդամյակի իրագործման հաջողությունները բազա նախապատրաստեցին սոցիալիզմի հետագա, ե'լ ավելի ուժգին աճման համար ԽՍՀՄ-ում։ Առաջին հնդամյակի համար մղվող պայքարի փորձի վրա հիմնվելով, մեր կուսակցության XVII կոնֆերենցիան հիմնական դիրքեկտիվներ (ցուցումներ) ավեց յերկրորդ հնդամյակը՝ անդաստկարգ, սոցիալիստական հասարակության կառուցման հնդամյակը։

Աչա թե ի՞նչ ե ասվում կոնֆերենցիայի վորոշումներում։

«Յերկրի վիթխարի բնական հարստությունները, սոցիալիստական

շինարարության բայլչեմիկյան տեմպերը, բանվորների ու կոլտնտեսականների լայն մասսաների աճող ակտիվությունը և կուտակցության ձեւադրության առաջնազում են սոցիալիստական տնտեսության արտադրողական ուժերի այնպիսի ծավալում յերկրորդ հնգամյակում՝ վորի հիման վրա վերջնականապես կվերացվեն կապիտալիստական ելեմենտները ԽՍՀՄ-ում։ Կոնֆերենցիան դառնում է, վոր յերկրորդ երեքամյակի հիմնական բաղադրական խնդիրն ե հաթեխանում վերջնականապես վերացնել կառիչուալիստական ելեմենտները և առևտարակդասակրգերը, ինչին վաչենացնել դասակարգային տարրերությունները ու շահագործում ծնող պատճառները և հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, մի մնացորդներն եկոնոմիկայում ու մարդկանց գիտակցության մեջ, ամենաաշերք վոր աշխատավոր ազգաբնակչությունը վերածել ամենաաշերք, սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուկարգ, սոցիալիստական հասարակության գիտակից ու ակտիվ կառուկարգ,

Դասակարգային մակաբույժ ելեմնոների վերացման և առ բողջաւ-
աղես աշխատավորության տրամադրության տակ զբվող ժողովրդական
յեկտմուի ընդհանուր անման հիման վրա պետք է զգալիորեն ավելի ա-
րագ բարձրանա բանկորական ու գյուղացիական մասսաների բարեկե-
ցությունը և ընդ նմին վճռականորեն բարելավի վողջ բնակարանա-
ցությունը և կոմունալ գործը ԽՍՀՄ-ում։ Կոնֆերենցիան դանում է, վոր
յին ու կոմունալ գործը ԽՍՀՄ-ում։ Կոնֆերենցիան դանում է, վոր
ազգաբնակչության ապահովումը հիմնական սոլառողական ապրանք-
ազգաբնակչության ապահովումը սննդամթերքներով, յերկրորդ հնգամյակի վեր-
ներով, և այդ թվում՝ սննդամթերքներով, յերկրորդ հնգամյակի վեր-
ջին պիտի և ավելանա առաջին հնգամյակի վերջի համեմատությամբ
առնվազն յերկու-յերեք անգամով։

Այս խնդիրների իրազործումը հնարավոր ե միայն վաղջ ժողովրդական տնտեսության՝ արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության ծավալուն տեխնիկական վերակառուցման բազայի վրա...

Համ Կ(ր)Կ XVII կոնֆերենցիան գտնում է, որ յարկագույն պարագաները հիմնական և վճռական տնտեսական խնդիրն են հանդիսանում գալույակի հիմնական և վճռական տնտեսական խնդիրն են հանդիսանում վաղական ժամանակաշրջանում՝ ալարտումը, Թռվող ժողովրդական տնտեսության վերակառուցման ալարտումը, Թռագույն տեխնիկական բազայի ստեղծումը ժողովրդական տնտեսության բոլոր նյուղերի համար»:

կարգ, սոցիալիստական հասարակության
Քառամյա շրջանը, վոր մենք անցկացրինք առաջին հնդամյակի
համար մղվող պայքարում, բայլչեկլյան մարտերի մի շրջան եր՝
հանուն յերկրի ինդուստրացման, վոզդ ժողովրդական տնտեսության


բազա կազմող ծանր արդյունաբերության բարձրացման, հանուն գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, մեր յերկրում կապիտալիստական շահագործման վերջին հետարանը հանդիսացող կուլակության վերացման։ Իսկ ի՞նչ ե ներկայացնելու յերկրորդ հնդամյակի շրջանը։

«Դա կլինի մի շրջան, —ասում եր XVII կումիոնֆերենցիայում Պետալանի նախագահ՝ ընկ. Կույրիշենվը, —յերբ կվոչնչացվի մարդու միջոցով մարդու շահագործման ամեն մի հիմք, բայց յերբ տակավին կմնա հատուկ տիպի պետության անհրաժեշտությունը, պետություն, վորը պաշտպանի արտադրության միջոցների ընդհանուր սեփականությունը։ Տակավին կմնա, ինչպես լենին եր ասում, հասարակության և պետության կողմից աշխատանքի չափի ու սպառման չափի վրա ամենախստ վերահսկողություն ունենալու անհրաժեշտությունը, յերբ վարձատրությունը կկատարվի ըստ աշխատանքի և վոչ թե ըստ կարիքի։

Դա կլինի մի շրջան, յերբ աշխատանքը, վոր արդեն իսկ այժմ բանվոր դասակարգի առաջավոր ջոկատների համար հանդիսանում է պատվի դործ, փառքի դործ, արիության և հերոսության դործ, կենի պատվի դործ, փառքի դործ, արիության և հերոսության դործ անդասակարգ, սոցիալիստական հասարակության բոլոր ակտիվ ու դիտակից կառուցողների համար։

Դա կլինի մի շրջան, յերբ աշխատանքի հին բաժանումն ավելի ու ավելի կվերացվի, գյուղատնտեսական աշխատանքը կդառնա ինդուստրիալ աշխատանքի մի այլաձեռություն, դրանով իսկ պայմաններ ստեղծելով քաղաքի և գյուղի հակադրության լիակատար վերացման համար։

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄԹԸՆԿ



Ելեքտրոկայանների կարողություն

Իս կլինի մի շրջան, յերբ Փիզիկական աշխատանքով դրազված բանվորը կսկսի լայն մասշտաբով պոլիտեխնիկական կրթություն ստանալ, յերբ դրանով իսկ նախադրյալներ կստեղծվեն ապագայում մտավոր ու Փիզիկական աշխատանքի հակադրությունը վերացնելու համար։

Դա կլինի մի շրջան, յերբ դասակարգերն արդեն վոչնչացված են, բայց պետությունը և պրոլետարիատի դիկտատուրան դեռ պահպանում են իրենց նշանակությունը և պետք է ամեն ձերակ ամրացվեն, քանի դեռ գոյություն ունի թշնամի կապիտալիստական ըջնակատը, քանի դեռ կապիտալիզմի բացահայտ և դադանի գործակալները կկատարեն իրենց քանդարար աշխատանքը, քանի դեռ մեր յերկրում կմնան կապիտալիզմի դադարած բեկորները։ Սոցիալիզմի հաջողությունները ձեռք կերպեն միայն պայքարելով կապիտալիզմի այդ մնացորդների դեմ և անխնա հակահարված տալով հակահեղափոխական կապիտալիստական ելեմենտներին, միայն հաղթահարելով բուրժուական և մանր բուրժուական նախապաշտումներն աշխատավորության մեջ, միայն համար աշխատանք կատարելով նրանց սոցիալիստական վերադաստիարակման ուղղությամբ։

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԲ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Մեր վողջ ժողովրդական տնտեսության զարգացման տեմպերը յերկրորդ հնդամյակում չառ բարձր կլինեն — դրա համար մեր յերկրում մենք մեր տրամադրության տակ ունենք նորանոր աղբյուրներ։ Բանվոր դասակարգի համախմբվածությունն ու ակտիվությունն այժմ ավելի բարձր է, քան առաջին հնդամյակի սկզբում։ աշխատանքի սոցիալիստական ծերեն այժմ ավելի տարածված են. մենք ձեռք բերել պլանավորման խոչըր փորձ. մեր կուսակցությունն ամուր է ու միասնական, քան յեղել և յերեկից։ Արդյունաբերական արտադրանքի տարեկան աճման տեմպը մեղ մոտ կլինի 20%-ից վոչ պակաս։ այդ հնդամյակում և, վոր յերկրորդ հնդամյակի վերջում մենք վողջ արդյունաբերական արտադրանքը կրարձրացնենք առնվազն $2 \frac{1}{2}$ անգամ՝ 1932 թվի համեմատությամբ։



(միլիոն տոններով)

Այդ նշանակում ե, վոր մեր տնտեսության առանձին հյուղերի գծով մենք կկարողանանք գործնականում հասնել և անցնել տեխնիկական-անտեսական տեսակետից ամենից ավելի առաջավոր յերկրների կարգացման մակարդակին: Ահա մոտավորապես այն խոչըն տնտեսագրային մակարդակին: Այս մոտավորապես այն խոչըն տնտեսագրային մակարդակին:

Թուջի գծով մենք մեղ խնդիր ենք առաջարրում հնդամյակի յերշում արտադրել 22 մելիոն տոնն: Այդ նշանակում ե, վոր մենք Յեղապայում կլինենք առաջին տեղում և կղիջենք միայն Ամերիկային, քողայում կղիջենք առաջին տեղում և կղիջենք միայն Ամերիկային, վորը 1929 թվին, այսինքն՝ ամենամեծ վերելքի տարրում, տնտեսական գործարաններից անմիջապես առաջ, արտադրում եր 43 մելիոն տոնն: Դրա հզնաժամից անմիջապես առաջ, արտադրում եր 43 մելիոն տոնն: Դրա հզնաժամից անմիջապես առաջ, արտադրում եր 43 մելիոն տոնն:

Ահամար Կուզնեցկի, Մագնիսովորսկի, Զավորոժիեյի, Լիպեցկի, Ազարյան Կուզնեցկի, Սագումովուսկի, Զավորոժիեյի, Լիպեցկի, Ազարյան, Կրիվոյ Ռոգի, Ներքին-Տագիլի, Բակալակի, Սինարսկի, Նոր-Տուլայի գեղանատ գործարաններն ավարտելուց, ինչպես նաև Վորոշիլովի, Զերժինսկու և Տոմսկու անվան գործարանները վերակառուցելով, Զերժինսկու և Տոմսկու անվան գործարանները վերակառուցելով, կոկովին Խալիլզակի (Մեծին Վոլգա), Կոմարովո-Զերժինսկի (Բաշկիրիա), Զերժինսկովոյի (Սրեելյան Սիրիր), Դաշքեսանի (Անդրկովկաս), Սուչանի (Հեռավոր Սրեելյա) գործարանները: Նրանցից, առ մետաղաձուլման այդ գիտանոներից բացի, կեառուցվեն մի շարք գործարաններ և Աւրալում, Մոսկվայի մարզում և այլն:

Գունավոր մետաղաձուլման գծով յերկրորդ հնդամյակի ընթացքում պղինձ, արծիճ, ցինկ, ալյումին և հաղվադյուտ ելեմնենուներ կձուլվեն պայմանական չափերով, վորոնք անհրաժեշտ են Խորհրդային յերկրի պայմանական չափերը լիովին բավարարելու համար:

Ածուխի գծով մենք ուրվագիծում ենք հանել 250 մելիոն տոնն յերշուրդ հնդամյակի վերջին տարրում: Այդ նշանակում ե, վոր մենք կանց գերմանիայից, ֆանսիայից և մյուս յերկրութական յերկրներից, կհավասարվենք Անդիխային և հետ կմնանք միայն Ամերիկայից:

Նավթի գծով մենք 1937 թվին կատանանք 80—90 մելիոն տոննից վոչ պակաս, պահպանելով յերկրորդ տեղը աշխարհում և զգալիորեն ժողովական, պահպանելով յերկրորդ տեղը աշխարհում և զգալիորեն արդյունաբերությունը կղարգանա վոչ միայն ներկա հիմնական չինական գրաններում (Դոնբաս, Կուզբաս, Ղարազանդ, Գրոզնի, Բագու, Եմբա և այլն), այլև նոր չրշաններում—Հեռավոր Արևելքում (ածուխ), Սախալինում (նավթ), Կամչչատկայում (ածուխ) և այլն: Դեռևս առաջին հնդամյակում խոչըն հաջողություններ ձեռք բերած նավթարդյունաբերությունը կերպարան հետաքա վերակառուցումը մեր նավթարդյունաբերությունը կղարձնի ամենից առաջավորն աշխարհում:

Թուջի, ածուխի և նավթի հանույթի այսպիսի մակարդակի հիման

վրա մենք յերկրորդ հնդամյակում զգալիորեն առաջ կմղենք մեքենա-շինուք-յունը, վորը մեքենաների արագությունը կավելացնի 3—3½ անգամ: Այդ նշանակում ե, վոր մենք կղրավենք յերկրորդ տեղը աշխարհում տնտեսական տեսակետից և առաջին տեղը տեխնիկական տեսակետից, վորովհետև մեր սոցիալիստական արդյունաբերությունը կյուրացնի մեքենայական տեխնիկայի ամենից ավելի առաջավոր նմուշ-ները: Ավտոմոբիլների գծով մենք առաջին տեղը կղիջենք Ամերիկային: Տրակտորների գծով—արտադրելով տարեկան 170 հազար տրակտոր—մենք ավելի շատ կարտադրենք, քան յելլոր յերկրները միասին վերցրած:

Յերկրորդ հնդամյակում վիթխարի չափով կամի էիմիան, վորն ըստ եյության արդյունաբերական նոր ճյուղ ե մեր յերկրում: Քիմիայի վրա գնալով ավելի ու ավելի յեն հիմնվելու ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը. նա վճռական նշանակություն ունի գյուղատնտեսության մեջ և յերկրի պաշտպանության գործում: Յերկրորդ հնդամյակի ընթացքում, չնայած այդ տեսակետից մենք ամենահետամնաց յերկիրն ելինք, առաջին տեղերից մեկը կղրավենք աշխարհում, Հատկապես գյուղատնտեսության համար պարարտանյութեր արտադրելու գործում: Այսուել մենք վոչ միայն առաջին տեղը կղրավենք Յելլոր պայմանը, այլև կանցնենք Ամերիկային: Քիմիան յերկրորդ հնդամյակում մեղ մոտ պետք ե լուծի եեղուկ վառելանյութ, արեստական մանրաթեր արտադրելու և այլ ինդիրներ:

Ժողովրդական տնտեսության հիմքն և հանդիսանում ելեկտրոններ գիան: Լենինը բացառիկ նշանակություն եր տալիս ելեկտրիֆիկացիային: «Կոմունիզմը հայտար ե խորհրդային իշխանության պլյուս ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացիային», —ասել ե Լենինը: Յերկրորդ հնդամյակի վերջում մենք կարտադրենք 100 միլիարդ կլլ. ժամ ելետրունիքիա (1932 թ. 17 միլիարդի դիմաց), դրանով ընդհուպ մոտենալով այն մակարդակին, վոր ուներ Ամերիկան իր արտադրության ամենամեծ վերելքի տարրում (1929 թ.):

Կասպի միջոցները, ինչպես յերկաթուղիները, ջրային տրանսպորտը, ողային ճանապարհները, բնորոշում են յերկրի ընդհանուր տնտեսական և կուլտուրական վերելքը: Յերկաթուղային տրանսպորտի գծով մենք յերկրորդ հնդամյակի ընթացքում արմատական վերակառուցում կկատարենք, ծավալելով մոտ 30 հազար կիլոմետր նոր յերկաթուղային գործարանին ճանապարհների վրայով, դրանով ընդհուպ մոտենալով ուժեղ զոդեկառուքը և մեծատար վարդուններ, ելեկտրիֆիկացիա ծավալելով մի շարք ճանապարհներում, լայնորեն գործադրելով ավտոմատ կցումը, ավտոմատ շրջափակումը,

ջերմաքարշները : Յերկաթուղային տքանսպորտի ծավալումը պետք է առաջանալի մի շարք ծայրերկային շրջանների և ազգային հանրապետությունների անտեսության բարձրացման արագացումը, յերկրներ և հանրապետությունների, վորոնց կարիքները բավարար չափով չեն սպասարկվել անցյալում անբավարար կամլի հետևանքով :

Զրային տրանսպորտի գծով մենք կվերակառուցենք ծովային և գետային նավատորմիզը, կյաւրացնենք և կրարելավենք ջրային ճանապարհները և կառուցենք գետային ու ծովային մեջենայացված նավահանգիստներ :

Ոդային ճանապարհների գծով մենք յերկրորդ հնդամյակի ընթացքում խիստ զգալի չափով առաջ կդնանք : Դեռ առաջին հնդամյակում մենք սկսել ենք կառուցել ավիացիոն գործարաններ և ավիացիոն մոտորների գործարաններ : Ներկ սկզբներին, 1921 թվին, մենք ունեյինք միայն Մոսկվա—Քյոնիգսբերգ գիծը (2 հաղար կիլոմետր) : Առաջին հնդամյակի ընթացքում խորհրդային ավիացիային հաջողվեց գրավել չորրորդ տեղը (Գերմանիայից, Ֆրանսիայից և Ամերիկայից հետո), ունենալով 18500 կիլոմետր ողային ճանապարհ : Իսկ յերկրորդ հնդամյակի սկզբն Խորհրդային Միությունն ունի արդեն 55 հաղար կիլոմետր ճանապարհ :

ԽՍՀՄ-ի կարեռադույն կենսական կենտրոնները կապված են ողային գծերով : Ոդային հաղորդակցություն ունեն արդեն Մոսկվա—Լենինգրադ, Մոսկվա—Խարկով, Մոսկվա—Ռոստով—Թիֆլիս, Մոսկվա—Կազան—Սվերդլովսկ—Ոմսկ—Նովոսիբիրսկ—Իրկուտսկ—Վլադիվոստոկ, Տաշկենտ—Դյուչամբե, Վիշիմ—Բուդայրո և այլ գծերը : Դրանցից բացի կանոնավոր կերպով աշխատում են մի շարք միջազգային նշանակություն ունեցող գծեր, վորոնք Խորհրդային Միությունը կապում են Գերմանիայի, Պարսկաստանի, Ավգանստանի հետ :

Ընթացիկ տարում ուրվագծված ե ավարտել աշխարհի խոշորագույն գծի կառուցումը, Մինսկ—Վլադիվոստոկ, ավելի քան 9 հաղար կիլոմետր յերկարությամբ, վորոնք արդեն աշխատում ե Մոսկվա—Վլադիվոստոկ գծամասում : Հետագայում հնարավոր ե այդ գիծը շարունակել մինչև Տոկիո, վորը հնարավորություն ե տալիս ուղիղ հաղորդակցություն հաստատել Արևմտյան Յեվրոպայի մայրաքաղաքների, Չինաստանի և Ճապոնիայի միջև :

Աւրվագծվում ե նաև բացել Խարկով—Կիեվ—Ոդեսա գիծը, հնարավորության դեպքում շարունակելով մինչև կոստանդնուպոլիս : Մի շարք նոր գծեր են բացվում խորհրդային ծայրագույն հյուսիսում, վորք վրէված ե հաղորդակցության վորեն միջոցներից, ինչպես նաև

ԽՍՀՄ-ի հյուսիսարևելքում : Արդեն իսկ ընթացիկ տարվա վերջում ԽՍՀՄ կունենա 247 այերուգրում, 78 հիդրոայերուգրում և 16594 կմ գեղեցիկ արասո, այսինքն՝ այնպիսի գծեր, վորոնցով հազորդակցությունը կատարվում ե գիշեր և ցերեկ : Հատուկ ուշադրություն ե դարձվում քաղաքացիական ուղանավատորմության լայն տեխնիկական վերակառուցմանը և թոփչքների ապահովության ավելացմանը :

ԳՅՈՒՂԱՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿՈՒՄ

Կապիտալիստական աշխարհի հանկանիչներից մեկն ե այն խղումը, անդունդը, վոր նա ստեղծում ե քաղաքի և գյուղի միջև : Յերկրորդ հնդամյակը կատարվությունները կատարվություններու քաղաքի և գյուղի հակադրությունը : Իսկ հիմնականում ի՞նչ ե իրագործվելու յերկրություղակում :

Գյուղատնտեսության կողեկտիվացումը լինին կանցկացվի բռնադրակ խորհրդային Միությունում . ել ավելի կաճեն և կղարդանան խոշոր պետական գյուղատնտեսական ձեռնարկությունները . խորհումնեսությունները և կոլտնտեսությունները կղինվեն նորագույն մենական տեխնիկայով . բայր կոլտնտեսությունները կընդգրկվեն մենական տրամադրային կայաններով, իսկ այդ նշանակում ե մեքենայացման յենթարկել ամբողջ զաշտավարությունը : Մեր կառուցած և կառուցվող տրամադրի գործարանները գյուղատնտեսության համար յերկրորդ հնդամյակի վերջում կապահովեն տարեկան առնվազն 170 հագար տրամադրի արտադրություն : Գյուղատնտեսության զգալի մասի արտադրությունն ելեկտրիֆիկացիայի կենթարկվի : Գյուղատնտեսական աշխատանքը, մեքենայացման և ելեկտրիֆիկացիայի չնորհիվ, ավելի ու ավելի կվերածվի ինդուստրիալ աշխատանքի այլաձեռության, դրանով իսկ պայմաններ ստեղծելով քաղաքի և գյուղի հակադրության լիակատար վերացման համար : Տարաբաժան քաղաքներն ու գյուղերը զգալիորեն ավելի լավ ու ավելի մեծ չափով կկապվեն իրար, չնորհիվ տրանսպորտի բոլոր տեսակների զարգացման :

Վողջ կուսակցական և խորհրդային հասարակայնության ուշադրության կենտրոնը պետք է կազմեն կոլտնտեսությունների հետագա կազմակերպական տնտեսական զարդացման, կոլտնտեսական մասսաների սոցիալիստական վերադասիարակման և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում աշխատանքի վորակի՝ բերքադրվության, արդյունավետության, ապրանքայնության բնդիրները :

Խորհրդային Միության անահապեսությունը յերկրորդ հնդամյակում այնքան, կավելացնի հոտը և ապրանքային արտադրանքը, վոր

Հիմնականում կլուծվի անասնապահական սլրութեմը: Կունական
աղքանքային ֆերմաները անասնապահական խորհունտեսութեմը:
Առաջին կընդգրկեն վողջ ապրանքային անասնապահ-
չութիւն ինամքի և ողտագործման միշտ շարք կարենուածույն աշխատանք-
ները մեքենայացման կենթարկվեն: Խիստ բարձրանալու յե հոտի վա-
րակը՝ կարենատվությունը, քաշը, բազմացումը և այլն:

Բամբակն ու վուշն իրենց արտադրանքը կավելացնեն վոչ պակաս,
քան յերկու անգամ, իսկ շաքարի ճակնդեղը կեռապատկի իր արտա-
դրանքը:

Հացահատիկային տնտեսության հետագա և ե'լ ավելի արագ վեճը հաջահատիկային արտադրանքը յերկրորդ հնդամյակի վերջում կասցնի առնվազան 1300 մելիոն ցենտների։ Յերկրորդ հնդամյակի կետրոնական խնդիրն է հանդիսանում հացահատիկային և սեխնիկա-նան կարևորագույն պերֆառմուրյան վնական բարձրացումը։

Սյստեղ մեքենայացումից բացի անձրածնը և լայնաց և
պղոնոմիական միջոցառումների մի ամբողջ սիստեմ—ավելի կատա-
րելագործված հերկ, ցանքափոխություն, պարարտացում, պայքար-
վածությունը դեմ, դաշտերի մաքրում և այլն: Այս բոլոր միջոցա-
վասառուների դեմ, դաշտերի մաքրում և այլն: Այս բոլոր միջոցա-
վասառուները քիչատվությունը պետք է բարձրացնեն առնվազն 40%-ով:
ուստի առաջարկությունը պետք է բարձրացնեն լուծումը, —հատկա-
ներացուի դեմ պայքարելու հարցի բայց և կենսակյան լուծումը, —
պետք է ներքին և ներքին վոլզայում, Ուրալում, Հազարամասում և Ար-
քանազան տեղանակներով՝ ջրանցքային վոռողումով, անձրևա-
բխում, զերացուի դիմուցող կուլտուրաների ընտրությամբ և այլն,
յերկրորդ հնդամյակի կարևորագույն միջնառումներից մեկը կընի:
Յերկրորդ հնդամյակի վոչ պակաս կարևոր խնդիրն եւ հանդիսանում
սպառող շրջանները (վորոնք իրենց արտադրությամբ չեն ծածկում
հացի իրենց տմբողջ պահանջը) վերջնականապես վերածել արտադրող
շրջանների—դրա կարիքն ունեն վոչ միայն այնպիսի շրջաններ, ինչ-
պիսին և Մոսկվայի մարզը կամ Նիժնի-Նովգորոդի յերկրորդ և Հյու-
սիսային յերկրորդ, այլև այնպիսի խոչը ծայրերկրներ, ինչպես Արևե-
լյան Սիբիրը և Հեռավոր Արևելյան յերկրորդ:

Մայն Սիրիուս և Համակոր օքառելու յաւագը:

որ, տրամապորտը, կապը—քաղաքի և գյուղի միջև ապրանքա-
ուրյան բարելավումը—այս բոլորը կնպաստեն գյուղը բար-
պացնել աշակեր սոցիալիստական քաղաքի մակարդակին:

ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Յերկրորդ հնգամյակի վերաբերյալ դիրքետիվները նշում են 2-ը
անդամով այլելացնել աղդաբնակչության սպառումը:

«թեթև արդյունաբերությունը յերկրորդ հնդամյակում, —հայտարկեց լինէ. Կույրիշելով XVII կուսկոնքներենցիայում, —մէ քիչ այլ դեպք կդրավի, քան առաջին հնդամյակում : Այդ լիովին հասկանալի յէ Այստեղ յերկու հանդամանք վճռական են հանդիսանում : Առաջին՝ վուշի կանգնեցնելով ծանր արդյունաբերությունը և ծավալելով մեքենաշինությունը, մենք պայմաններ ստեղծեցինք, վրասեզի թեթև արդյունաբերությունն առաջ շարժենք ալիլի արագ տեմպերով, վորոնք համապատասխանեն ներկայումս մեր առաջ ծառացած խնդիրներին : Եերկրորդը հումքային բազայի ստեղծումն է : Ավարտելով կողեկանիցացումը և զգալի չափով վերադիմելով գյուղատնտեսությունը, առաջին հնդամյակն ամրացրեց հումքային բազան գյուղատնտեսության բոլոր բնագավառներում, ինչպես՝ բամբակը, վահը, նակնինը և այլն : Ուստի յերկրորդ հնդամյակում մենք կարող ենք թուրք և սննդի արդյունաբերության զգալիութեն ավելի լայն ծավալում նախագծել : Ուստի մենք կարող ենք մեզ խնդիր առաջարկել յերշտու գեղագյակի վերջում մոտավորապես 2—3 անդամով ավելացնելու շնչարին սպառման նորմաներն ինչպես արդյունաբերական ապրանքների բնագավառում, այսպես ել սննդամբերի բնագավառում :

Զափազանց կարեոր և թերեւ արդյունաբերության նոր, սոցիալիստական տեղադրման խնդիրը: Հիմնական սկզբունք կհանդիսանալ վերամշակման մոտեցումը հումքի ջրաններին: Յերկրորդ հնդամյակում թեթև արդյունաբերությունը տեղաշարժ կկատարի գեպի Արևելք, հումքին ավելի մոտիկ: Բամբակեղենի գործարանները, մեծ, ուժեղ բամբակագործական կոմբինատները, ինչպես Հեն Կառուցվելու վոչ Մուկվայի մարզում, վոչ եւ Իվանովկո-Լողնեսէնսկի մարզում: Նրանք կկառուցվեն այնտեղ, վորոտեղ աճում ե բամբակը—Միջին Ասիայում, Ղազախստանում կամ հումքին մոտիկ շրջաններում...

Վուշի ձեռնարկությունները կառուցվելու յեն Հեռավոր Արևելյան քերկում, հումքի շրջաններում, Արևելյան Սիբիրում, Հյուսիսային յերկում, Բելոռուսիայում և այլն:

Շաքարին գործարանները նույնպես շարժվում են զեղի Արևելք-
Ղազախստան, Սիբիր, Միջին Ասիա (ներառյալ Կիրգիզիան), Անդրկովկա-
զան և այլն:

Մայ կոմբինատները՝ Պաղախստան, Արևելյան Սիբիր և անասնապահական այլ շրջաններ: Բայց մսի կոմբինատներ կառուցվելու յէն ենեւ սպառող շրջաններում՝ Մուկվայում, Լենինգրադում և այլ եռշոր պրոետարական կենտրոններում:

Մսի պահածոյի և ձկան պահածոյի լայնածավալ կործարաններ են կառուցվելու Հեռավոր Արևելյան յերկրութ, Ղազախստանում, Հյուսիսային յերկրութ, Մուրմանսկում և այլն»:

Անձնական սպառման մակարդակով Խորհրդային Միաւթյունը
յերկրորդ հնգամյակում կդառնա աշխարհի ամենաառաջավոր յերկիրք,
վող միջազդային պրոլետարիատին ցույց տալով, թե ինչ կարող ե
ձեռք բերել սոցիալիզմ կառուցող բանվոր դասակարգը։ Առանձնապես
աճելու յե մասի, կաթի, պտուղների, ձվի և այլ մթերքների սպառմը։
Զգալի չափով կավելանա արդյունաբերական ապրանքների՝ դործ-
վածքների, վտանգանի և այլ ապրանքների սպառումն ինչպես քա-
ղաքում, այնպես ել գյուղում։ Զտեսնված չափով կաճեն այնպիսի ար-
տադրություններ, ինչպես թղթագործական, պոլիգրաֆ գործը, կինո-
ֆոտո-ռադիօս ապարատներ, ելեկտրական սարքավորման, բժշկական և
այլ դործիքների արտադրությունը և այլն։

Ինդուստրիալ ազգաբնակչությունը յերկրորդ հնդամյակի ընթացքում 35 միլիոնից կհասնի 50 միլիոնի: Դրա հետ միասին զգալիորեն կավելանան նաև աշխատավորության կուլտուր-կենցաղային սռածարքում բույր միջոցները: -Կծալաւլիլի հասարակական ճաշարանների, մանկական սենյակների և ոջախների, մուռների, կուլտուրայի տների, պահպանների, բաղնիքների և այլ հիմնարկությունների վիթխարի շանգր:

«ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԴԱՄՅԱԿԸ պետք և հանդիսանա յերկը է հիմնական
խղուսատրիալ կետերը կուլտուրական, տեխնիկական ու տնտեսագիս
զարգացած, բարեկարդ պրոլետարական լենտրոնների վերածելու և
մեծ քանակությամբ նոր, սոցիալիստական քաղաքներ ստեղծելու հըն-
դամյակ: Լայն, առողջարար միջոցների կիրառումը, մսուրների և
կոնսուլտացիաների ցանցի զարգացումը, սանիտարական գրագիտու-
թյան տարածումը, սննդի բարելավումը զգալի չափով կնվազեցնեն
հիմնադաշումները և ե՛լ ավելի կրծատեն մահացությունը, մանավանդ
մահուկների մեջ: Աշխատավորություն հասարակական կյանքի, ինքնա-
շարգացման և ֆիզիուլուրայի զարգացումը, մասսաներին արվեստին
հաղորդակից դարձնելը պահանջում են ընդարձակել ակումբների, աշ-

ինաւանքի պալատների, թատրոնական և զեկուցումների սրահների, սոսադիտների, սպորտային հրապարակների ցանցը, դարձացնել սպորտային սարքավորման, Փոտո-սպարատների, յերաժշտական դործիքների արտադրությունը և այլն:

ԽՍՀՄ-ն առաջավոր ինդուստրիայի յերկրի վերածելու խնդիրը կապված է արդյունաբերության և գյուղատնտեսության աշխատողների կուլտուրական մակարդակի բարձրացման խնդրի հետ։ Այլևս անբավարար է համատարած գրադիտությունն ընդհանրապես, վորը հիմնականում ձեռք է բերված առաջին հնդամյակում, — անհրաժեշտ և պալիտեխնիկական գրագիտություն»։

Սպառման աճումը, աշխատավորության բոլոր նյութական պայմանների բարելավումը, նրանց քաղաքական գիտակցության և դրանգիտառության աճումը, աելինիկայի տիրապետումը և սոցիալիստական աշխատանքի բոլոր ձևերի հետագա ծավալումն իրենց հերթին աղղելու յին աշխատանքի բարձրացման և աշխատանքի վորակի վրա, մեզ համար առահովելով արտադրողական ուժերի աննախընթաց բարդավաճում յերկրորդ հնգամյակում:

XVII կուսակցական կռնֆերենցիան յերկրորդ հնդամյակ կազմելու ժամանակած իր գիրեկախիվներում նախազգուշացնում և մեր վողջ կուսակցությանը և Խորհրդային Միության բոլոր աշխատավորներին, վեր՝

«...Սացիւալիզմի նոր հաջողությունները բանվոր դաստիարագը կապահպահվի միմիայն պայքարելով կապիտալիզմի մնացորդների ղեկ, ամենա հականարկած տալով կործանվող կապիտալիստական ելեմենտների դժմարդրությանը, հաղթահարելով բուրժուական և մանր-բուրժուական նախապաշտումներն աշխատավորության մեջ և հաստատակամ աշխատանք կատարելով նրանց սոցիալիստական վերադաստիարակման ռելյությամբ:»

Այդ նշանակում եւ՝ ասված ե կոնֆերենցիայի վորոշումների մեջ, —վոր Հետապայում ևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրբամն առանձին մոմենտներում ու հատկապես առանձին ըրջաններում և ոոցիալիստական շինարարության առանձին բնագավառներում, վորը զբա հետ միասին ընդգծում ե, վոր անխուսափելի յե բուրժուատական ազգեցությունների պահպանումը, իսկ վորոշ դեպքերում նաև ուժեղացումն աշխատավորության առանձին խավերի ու խմբերի վրա, անխուսափելի յե դեռ յերկար ժամանակվա ընթացքում առուել

տարիատին խորթ դասակարգային աղղեցությունների թափանցումը բանվորների և անդամ կուսակցության մեջ։ Այս նկատառումով կուսակցության առաջ խնդիր է դրվում՝ ամրացնել պրոլետարական դիկտուրան և ե՛լ ավելի ծավալել պայքարն ընդդեմ ոպորտունիզմի, հատկապես լճադեմ աշքեման՝ իրեւ տվյալ ետապի գլխավոր վտանգի։

Բացահայտ և թագուն ոպորտունիստները, բուրժուալիան վերասեր-վածները, վորոնք սկասահարար պահում են կուսակցական տոմսերը և տեղատեղ բարձրացնում են գլուխները, փորձում են արտավորել սոցիալիզմի կառուցման մեծ պլանը, վոր ընդունել է կուսակցությունը։ Հնդ նմին նրանք մեկ նորատակ են հետապնդում—կասկած սերմանել մասսաների մեջ, վիժեցնել նրանց ստեղծարար յեռանդը՝ անդասա-կարդ սոցիալիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարում։ Կուսակցությունն անխնա կպատժի ջախջախված ոպողի-շիռն խմբերի այս թափթփուկներին՝ իրեւ դասակարգային թշնամու ուղղակի գործակալների։

Յերկրորդ հնդամյակն ե՛լ ավելի մեծ չափով, քան առաջինը, կրարձրացնի աշխատավորության միջինավոր մասսաների խանդա-վառությունը՝ պայքարելու սոցիալիզմի համար, նրանց ե՛լ ավելի էջամախմբի կուսակցության և նրա առաջնորդ՝ ընկ. Ստալինի շուրջը, ե՛լ ավելի կամրապնդի ԽՍՀՄ-ն՝ վորուս միջազգային հեղափության բազա։

«Յարիկմի դարաշրջանում Ռուսաստանի ժողովուրդներին սիստե-մատիկ կերպով գրգռում եյին միմյանց դեմ։ Այդ քաղաքականության արդյունեները հայտնի յեն—մեկ կողմից՝ կոտորած և փամփուշտ, մյաւս կողմից՝ ժողովուրդների սորվություն։ Այդ ամոքալի քաղաքականությանը վերադարձ չկա և չի լինելու։ Այսուհետև նա պետք է փոխարինվի Ռուսաստանի ժողովուրդների կամավոր և ազնիվ դաշինքի քաղաքականությամբ։ Միայն այդպիսի դաշինքի հետևանքով Ռու-սաստանի ժողովուրդների բանվորներն ու գյուղացիները կարող են գորվելով գառնալ մեկ հեղափոխական ուժ, վոր ըմբունակ լինի դի-մանալ իմպերիալիստական—անհետիստական բուրժուազիայի ամեն տեսակ վոտնագություններին։»

ՌՈՒՍՍԱՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԽՐԱՎՈՒՔՆԵՐԻ
ԴՕԿԱՐԱՑԻԱՑԹ, 1917 թ. ՆՈՅԵՄԲՐԻ 2.

ԽI ԳԼՈՒԽ

ԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

8ԱՐԱԿԱՆ ՌՈՒՍՍԱՏԱՆԸ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՆՏ ԵՐ

Յարական Ռուսաստանն ամբողջ աշխարհում հայտնի յեր վորակեա ժողովուրդների բանտ։

«Յարական Ռուսաստանը,—ասում ե ընկ. Ստալինը,—ամեն տե-սակ՝ թե՛ կապիտալիստական, թե՛ գաղութային, թե՛ ռազմական ճնշման ոջախ եր, վերցրած նրա ամենից ավելի անմարդկային և բար-բարոսական ճեղով։ Ո՞ւմ հայտնի չե, վոր Ռուսաստանում կապիտալի ամենազորությունը միաձուլվում եր ցարիզմի բռնապետության հետ... ցարիզմի գահճային վերաբերմունքի հետ՝ դեպի վոչոռու ժողովուրդ-ները, —ամբողջ շրջանների Տաճկաստանի, Պարսկաստանի, Զինաստանի շահագործումը՝ ցարիզմի կողմից այդ շրջանների գրավման հետ, նվա-ճողական պատերազմի հետ։ Ինքնակալության քաղաքական և տնտե-սական ճնշումը, տիրող ուղղափառ յեկեղեցու մերկապարանոց խափա-րամոլությունը ե՛լ ավելի ուժեղանում եյին ուսական չինովնիկների, գեներալների, վաճառականների կամայականությամբ, նրանց բռնու-թյամբ՝ բաղմաթիվ ժողովուրդների հանդեպ, վորոնք (ժողովուրդնե-րը) ազգային ճնշման ծանր շղթաներով կասված եյին Ռուսական կայսրություն կոչված աքսորտական սայլին։»

Այս «ժողովուրդների բանտում» ամբողջ ազգաբնակչության կեսը կ'ուշում եր : Ըստ 200 ազգություններ անողոք շահագոլծման և ազգային ճնշման ելին յենթարկվում : Առանձնապես ուժեղ եր ազգային ճնշումը ծայրերկրներում : Վերջին յերեք հարյուրամյակներում ցարական Ռուսականը նվաճեց Բալթիական ծովի ափերը, Սիբիրը, Կովկասը, Ղրիմը, Թուրքեստանը և Հեռավոր Արևելքը : Տարիներ, իսկ յերբեմն տասնամյակներ տեսող անողոք պատերազմներում այդ ընդարձակ և հարսւատ շրջանները նվաճվեցին ոռւսական կալվածատերերի և կապիտալիստների կողմից : Նվաճելով ծայրերկրները, ցարական կառավարությունը և տիրող դասակարգերը սիստեմատիկ կերպով թալանում ելին այսուղ բնակվող ժողովուրդներին : Թուրքեստանից ոռւս վաճառականներն ու գործարանատերերը չնշին դներով բամբակ ելին արտահանում, Կովկասից՝ հանքաքար և նավթ, Սիբիրից՝ փայտ, մորթի, վոսկի : Աղջային ծայրերկրները եժան հումքի աղբյուրներ գտրձան ոռւսական արդյունաբերության համար : Դրա հետ միասին ոռւս կապիտալիստներն ազգային շրջաններում տեսնում ելին իրենց ապրանքի վաճառահանման շուկա : Ուստի, ամեններն հաշվի շառներով ծայրերկրներում բանկվող ժողովուրդների շահերը, ցարական կառավարությունը թույլ չեր տալիս, վոր զարգանա տեղական արդյունաբերությունը : Ցարական կառավարությունը գիտակցաբար կասեցնում, ամեն կերպ արգելակում եր Ռուսաստանի ժողովուրդների տնտեսական զարգացումը : Թուրքեստանի բամբակը, փոխանակ տեղում վերտաշակելով մանուֆակտուրա դարձնելու, հաղարալոր կիլոմետր ճանապարհով փոխադրվում եր Մոսկվայի և Իվանովո-Վլոգնեսենսկի դորժարանները, հետո այդ բամբակի մի մասը վորպես պատրաստի դորժածք Թուրքեստան բերելու և բարձր դներով վաճառելու համար :

Ցարական կառավարությունը կերպից, բաշկիր, Յաթար գյուղացիներից խլում եր լավագույն հողերը և տալիս ոռւս կալվածատերերին ամենահարուստ կալվածքներ ստեղծելու համար : Թալանված կիրգիզները, բաշկիները և մյուսները դատապարտվում ելին քաղցի, աղջառության և մահացման :

Նվաճված մարզերում և շրջաններում աղատորեն տնտեսավարելու համար ցարական կառավարությունն ազգային ծայրերկրներում հաստատում եր անողոք վոստիկանական ոեժիմ, վորը հենվում եր չինովնիկների կամայականության, քաղաքական իրավազրկության և ճնշման վրա : Աղջային ծայրերկրների աշխատավոր աղջարնակչությունը զրկված եր ամեն տեսակ իրավունքներից : Վոստիկանությունը և դատարանները գրեթե բացառապես ոռւս չինովնիկներից ելին բաղկա-

ցած : Տեղական աղդաբրնակչությանն արգելվում եր ովավել իր մայրենի յեղփից՝ պետութեան հիմնարկություններին դիմելու, յիշելուներին դպրոցներում սովորացնելու : Ճանաչվում եր միայն մեկ լիցու՝ ուռեւ բնենը : Ցարական չինովնիկներն ուղղափառ տերաերների հետ միասին իրադրությունների ուղղափառ տեղական կուլտուրան ճնշելու, բոնի կերպով ոռւսերն լեզուն և ուղղափառ համարքն արմատացնելու քաղաքականությունը :

Անծայրածիր յերկրի սորբացլած ժողովուրդների վրա իր իշխանությունը պահպան և ցարիզի կամայականության ու ճնշման գեմպայքարելուց մասսաների ուղարկությունը շեղելու համար Ռուսաստանի տիրող դասակարգերը դիմում ելին ամենազգվելի միջոցների : Նրանք մեկ ժողովրդին գրգում ելին մյուսի դեմ, քշնամանի յերկառակությունների մեջ : Նրանք կազմակերպում ելին հայ-թուրքական, ուղբեկ-թուրքմենական, լեհ-ուկրայնական արյունահեղ կոտորածները : Ալուանձնապես գարշելի աղիտացիա յեր մղվում, —ասում և լենինը, —ուն-հարյուրակայինների կողմից՝ հրյաների դեմ : Սև-հարյուրակայիններն իրենց բոլոր մեղքերի համար փորձում ելին քավության նոխազդարձնել հրյա ժողովրդնեն : Ցարական չինովնիկները և վոստիկանությունն աշխատավորության ու մանր-բուրժուական ընկճված և խավարմասաների մեջ թշնամանք ելին հրահրում հրյաների դեմ (անտիսկ միտիզմ) :

Իր անտիսկմիտական քաղաքականությամբ ցարական կառավարությունը ձգտում եր աշխատավորության քայլայման և աղջառացման ամբողջ մեղքը ձգել հրյաների վրա : Հրյաներին չեր թույլատրությունակել կենտրոնական Ռուսաստանում : Հրյա աղդաբնակության մեջ մասը քված եր այսպիս կոչված «նստակեցության դժին ներսը՝ Ռուկայնայի և լեհաստանի տասը նահնդները : Հրյա աշխատավորներին չեր թույլատրում հողադորությամբ զբաղվել, նրանց թույլ չելին տալիս մանել խօշոր ձեռնարկությունները, ծանր արդյունաբերության և արդյունահանող արդյունաբերության շրջանները : Հրյա աղջառակության մեծամասնությունը, վորը կուտակված եր յերկրի արևմուտքի և հարավ-արևեմուտքի փոքր քաղաքներում ու ավաններում, սակայն ված եր մանր առևտորվ կամ արհեստով զբաղվել Հրյաները վոչ մի իրավունքով չելին ովավում, նրանց արգելված եր պետական պաշտօնաներ զրավել : Հրյա աշխատավորների զավակներին ուսումնական հիմնարկները մտնել թույլ չելին տալիս (հրյաների համար հատուկ նորմ յեր սահմանված) : Թագնվելով վայրենի զրպարտանքի, սառը ու դատարկ հերցուրանքների որիք (հրյաներին, սրինակ, մեղադրում ե-

յին այն բանում, վոր նրանք իրենց կրօնական ծիսակատարությունների ժամանակ քրիստոնյաների արյուն են գործածում), ցարական կառավարությունը խալվարամիտ ազգաբնակությանը դրգոստ եր հրյաների դեմ: Նա կազմակերպում և խրախուսում եր հրեյական ջարդերը. հրյաներին ծնեծում, սպանում եյին, նրանց գույքը լիակատար թալանի յեր յենթարկվում: Այդ բոլոր հալածանքները վերաբերում եյին, իհարկե, միայն աշխատավորներին. Հրյա վաճառականներն ու գործարանատերերն իրավունքներ եյին վայելում, չեյին զգում ճնշումը, չեյին տուժում ջարդերից. իրենց դասակարգային յեղբայրակիցների՝ ուսու կապիտալիստների հետ միասին նրանք թալանում և շահագործում եյին աշխատավորական մասսաներին:

Յարական Ռուսաստանի տիրող դասակարգերի և կառավարության վերաբերմունքը հրյաների հանդեպ բնորոշ ե հին Ռուսաստանի վողջ աղջային քաղաքականության համար: Տնտեսական և քաղաքական հնչում, ժողովուրդների տնտեսական և կուլտուրական զարգացման կասեցում, մտրակ և խարազսի—ահա ցարիզմի պազային քաղաքականության հիմունքները: Յարական Ռուսաստանի բազմաթիվ ժողովուրդները մահանում եյին, վայրենանում, խեղդվում այս «ժողովուրդների բանտում» և մեծագույն ատելություն եյին տածում շահագործման ու բնորության կարգերի հանդեպ:

ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԾՆՌԻՆԴ Ե

«Առաջավոր» կապիտալիստական պետությունների ազգային քաղաքականությունը քիչ ե տարբերվում ցարական Ռուսաստանի ազգային քաղաքականությունից: Կապիտալիստները և կալվածատերերն աշխատավորության շահագործումն ուժեղացնելու և իրենց իշխանությունն ամրացնելու նպատակով ողտագործում են նաև մարդկանց ազգային բաժանումը, մարդիկ, վոր խոսում են տարբեր լեզուներով, ունեն տնտեսական զարգացման տարբեր մակարդակ և առանձին ազգային կուլտուրա:

Այն հարցին, թե ի՞նչ բան ե ազդը, ընկ. Ստավնը պատասխանում ե—ազգը «լեզվի, տերիուրիայի, տնտեսական կյանքի, կուլտուրայի լնդիանը անդամանության մեջ դրսւորվող հոգեկան կառուցվածքի պատմականութեն գոյացած կայուն ընդիանը յունիտն ե»: Արտադրողական ուժերի անրավարար լինելը, փոխանակության թույլ զարգացումը, հաղորդակցության միջոցների ծայրահեղ հետամեացությունը բաժանում եյին առանձին շրջանները, իրարից բաժան եյին պահում առանձին բարբառները: Բայց արտադրողական ուժերի աճման, կապիտա-

լիզմի զարգացման, կապի ուժեղացման և ճանապարհների բարելավման համեմատ քայլայվում եր առանձին շրջանների տնտեսական ու կուլտուրական փակվածությունը. հարևան շրջաններն սկսում եյին միանալ մեկ ժողովրդական տնտեսության մեջ: Համատեղ, նույն տերիուրիայի վրա կատարվող տնտեսական գործունեյության հարյուրամյակները կուլտուրական սովորությունների ընդհանրություն եյին ստեղծում և դաստիարակում եյին միատեսակ հոգեկան (մտավոր) կառուցվածք. զանազան տարբեր բարբառներից կազմվում եր մեկ լեզու: Այս բոլոր հատկանիշները միասին վերցրած, վորոնք ստեղծված են պատմականություն, այսինքն՝ յերկարատև, դարեր տևող պրոցեսների ճանապարհով, կազմում են ազգը:

«Միջին դարերի վերջերից, —գրել ե Ենգելսը, — պատմությունն աշխատում է Եեվրոպայում խոշոր ազգային պետություններ կազմակերպելու ուղղությամբ»: 200 տարի առաջ ներկա Գերմանիայի տերիուրիայում կային 360 մանր պետություններ: Յուրաքանչյուրն ուներ իր որենքները, իր դրամը, չափ ու կշռի իր սիստեմը, իր մաքսատները: Ազրանքը Գերմանիայի մեկ ծայրից մյուս ծայրը փոխադրելու համար հարկավոր եր տասնյակ անդամ մաքս վճարել: Իհարկե, այդպիսի պայմաններում առեւտրի և արդյունաբերության լայն զարգացումն անհնար եր: Զարդացող կապիտալիզմը պահանջում եր ստեղծել մեծ պետություն ներքին լայն շուկաներով, վորպեսզի բավականաչափ ուժեղ լիներ իր բուրժուազիայի շահերն ուրիշ յերկների բուրժուազիայի հանդեպ պաշտպանել կարողանալու համար: 360 մանր պետությունների փոխարեն ստեղծվում ե միասնական Գերմանիա, և այց մանր պետությունների բանակիչները (բավարացիներ, սաքսոնացիներ, պրուսակիներ, հաննովերցիներ և այլն) կազմում են միասնական գերմանական ազգը: Նույնը տեղի ունեցավ նաև ֆրանսիայում, Անգլիայում, իտալիայում և այլ պետություններում:

Պայքարելով ազգային պետությունների ստեղծման համար, բուրժուազիան ձգտում եր լայն ներքին շուկա ստեղծել, այդ շուկայից դուրս մղել ուսարեկացներին և իր համար ասլահովել «իր» ժողովրդից շահ կորցելու հնարավորությունը:

Իր ժողովրդին շահագործելու մենաշնորհյալ իրավունք ապահովելով, բուրժուազիան միաժամանակ աշխատում և լայնացնելու իր գործունեյության դաշտը մյուս ավելի թույլ ժողովուրդներին նվաճելու, նրանց իր պետությանը միացնելու և ճնշելու ճանապարհով: Այդ ճնշումն արտահայտվում եր ամենից առաջ ստրկացված ազդի տնտեսական շահագործումն ուժեղացնելու, նրան թալանելու մեջ: Իսկ վորպեսզի թույլ չտան, վոր ստրկացված ազդը պայքարի իր աղաւաղբան

Համար՝ սահմանափակում են նրա քաղաքական իրավունքները, հալոծում
են նրա լիզան և կուլտուրան: Այդպես ելին ճնշվում Գերմանիայում ել-
զացիները և լիւէրը, իսպանիայում՝ կատալոնացիները, Բելգիայում՝
ֆլամանդացիները և այլն: Ազգային ճնշումն ամենից ավելի սուր ձևեր
եր ընդունում Յելբոպայի Արևելքում—բազմազդի ողեաթյուննե-
րում—ուստաշան, ավստրո—հունգարական և թյուրքական միացե-
առություններում:

ՄԻ ԲՈՒՌԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՅԵՎ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈ-
ՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԼԻՌՆԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Ազգային ճնշումն առանձին ուժգնությամբ դրսեռը վում և իմպե-
րիալիզմի դարաշրջանում, յերբ ավարտված եր բովանդակ աշխարհի
բաժանումը մի քանի իմպերիալիստական պետությունների միջև, զո-
ւոնք յերկրազնդի մեծ մասը դարձրել են իրենց գաղութները, յերբ
բուրժուազիան իր քաղաքականության հիմքն եր գարձում ազգային-
դաշտութային ճնշումը՝ համաշխարհային մասշտաբով: Իմպերիալիստա-
կան յերկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ճապոնիան և այլն, իրենց
գաղութներում՝ Ճնդկաստանում, Աֆրիկայում, Կորեյայում, Մանջու-
րիայում ել ավելի սանձարձակ են արտություն անում, քան իրենց
«տանը», իրենց պետություններում: «Իմպերիալիզմը,—ասում ե Լե-
նինը, —աշխարհի ազգերի տռաջադիմող (միշտ ավելի անող) շահա-
գործումն ե մի բուրք մեծ պետությունների կազմից, ազգերի նշանած
ուժեղացումն ե ու ամրացումը»:

«Իմպերիալիզմի բնորոշ գիծը, —գրում եր Լենինը, — նրանումն ե
կայանում, վոր ամբողջ աշխարհը ներկայում բաժանվում և մեծ թվով
նեշված ժաղավորների և չնչին թվով նշանակ ժողովարդների, վորոնք
անեն հոկայական հարստություններ և հզօր սաղմական ուժ: Վիրխո-
վի մեծամասնությունը, վորը միլիարդից ավելի յե հաշվվում, այսինքն
յերկրազնդի ազգարմականության 70 տոկոսը, պատկանում ե նեշված
ժողովուրդներին, վորոնք կամ անմիջական գաղութային կախման մեջ
են դաշնում, կամ պատկանում են ծայրերկրային գաղութային պե-
տություններին, ինչպես, որինակ՝ Թյուրքիան, Պարսկաստանը, Զի-
նաստանը, կամ թե, Հաղթվելով իմպերիալիստական մի մեծ պետու-
թյան բանակի կազմից, ըստ պայմանագրերի կախման մեջ են գտնվում
նրանից»:

Ամբողջ յերկրագնդի 2100 միլ. աղջաբնակչությունից 167 միլիոնն
ապրում են ԽՍՀՄ-ում, 1134 միլիոնն ապրում են գաղութներում և կի-

ռազադութներում, 204 միլիոնը՝ կախյալ յերկրներում և միայն 363
միլիոնը՝ իմպերիալիստական խօսք յերկրներում: Մի քառու իմպե-
րիալիստական գիշատիչներն իրենց մեջ են բաժանել բովանդակ յերկ-
րագությունը: Յելբոպայի և Ամերիկայի բուրժուազիան տիրում և Ասիա-
յի և Աֆրիկայի հարյուր միլիոնավոր աշխատավորության վրա, տի-
բանմ և նրանց բոլոր հարստություններին են նրանցից քամում և վերջին
հյութերը: Իմպերիալիստական պետությունները, մինչև առաջնակա-
զմակած, գաղութային և կիսազարդութային յերկրների ժողովուրդներին
կասավարում են իրենց գրեգորուանների, տանկերի, ողանավերի ողնու-
թյամբ, անողոք կերպով պատժում են բոլոր այն փորձերը, վոր անում
են նրանք ատրկությունից ազատագրվելու համար: Այսպիս, հարկերը
չմածելու համար անդլիացիներն ամբողջ գյուղեր այրեցին Ճնդկաս-
տանում, գնդիկ գյուղացիներին վնալակոծեցին ողանավերից:

Այնպիսի համեմատաբար վոչ մեծ յերկիր, ինչպես, որինակ՝
Անգլիան, վորտեղ ուղղում և 50 միլիոն հոգուց ել պակաս մարդ, տի-
բանմ և Ճնդկաստանի, Յեղիստոսի, Հարավային Աֆրիկայի 420 միլիոն
ժողովուրդների վրա:

Իմպերիալիզմը չի կարող դայություն ունենալ առանց ճնշելու,
առանց շահագործելու գաղութներն ու կախյալ յերկրները: Գաղուրա-
յին և կիսազարդութային յերկրների մակարուծական շահագործումը,
յերկրներ, ուր իմպերիալիստական պետությունները ներմուծում են
իրենց ապրանքները, կապիտալները և վորտեղից արտահանում են
հումքը, քամում են կոտադի շահույթներ, — հանդիսանում ե իմպե-
րիալիզմի կարևորագույն տնտեսական հենարաններից մեկը, առանց
վորի անհմաստ ե իմպերիալիզմի դոյությունը:

Իմպերիալիստները կատարում են գաղութային և կիսազարդութա-
յին յերկրների անտեսական զարգացումը, ամենաշածը դներով հավա-
քում են գյուղատնտեսության արտադրանքները և հոմքը՝ իրենց ար-
գունաբերության համար, մոնուպով զներով վաճառահանում են այդ
արդյունաբերության արտադրանքը, իրենց պլանացիաներում և հան-
գահորերում վոչ-մարդկային շահագործման են յենթարկում գաղու-
թային ժողովուրդների եժան բանվորական ուժը, գաղութների աշխա-
տավորներից պլոկում են վիթխարի հարկեր, խլում են հողը տեղական
դյուլացիությունից: Մասսաների աղաղակող աղքատություն, քաղց և
հիվանդություններ, հաճախ ամբողջ ժողովուրդների մահացություն—
ահա իմպերիալիստների գաղութային տիրապետաման արդյունքները:

Ազգային-զաղութային ճնշման ցայտուն որինակ են Հանդկաստանում
Ճնդկաստանը և Չինաստանը: Ճնդկաստանը հարստագույն յերկիր ե.
կուր չե, վոր անգլիական իմպերիալիստներն այն կոչում են Հանդկա-

կան թագի մարդարիտ»։ Բամբակը, բրինձը, զանաղան դաղութային ապրանքները, հանածո հարստությունները, աշխարհագրական դիրքը (Հնդկաստանը գտնվում է համաշխարհային ծովային ճանապարհի կենտրոնում)՝ այս ամենը Հնդկաստանը դարձրել են Անգլիայի ամենաարժեքավոր դաղութը։

Զգուելով իր արդյունաբերության համար ապրանքի վաճառահանման մոնոպոլ չուվկա ապահովել, Անդիմայի բուրժուազիան արդելակում և սեփական արդյունաբերության զարգացումը Հնդկաստանում։ Հնդկաստան գործարանային ապրանքներ ներմուծելով, անգլիական բուրժուազիան քարուքանդ եր անում տեղական տնայնագործական արդյունաբերությունը։ Իմպերիալիզմի դարաշրջանում և մանավանդ համաշխարհային պատերազմի ժամանակներից այստեղ սկսեցին զարգանալ տեքստիլ, մետաղածուլման, լեռնային և արդյունաբերական այլ ճյուղերը։ Բայց այդ արդյունաբերությունը կառուցվում ե առավելագույն անդիմական կապիտալիներով և դրեթե ամբողջապես գտնվում ե անգլիական կապիտալիստական հանդիպում։

Հնդկաստանի արտադրողական ուժերի գարգացումը դեմ և առ-
նում անգիտական իմպերիալիզմի տիրապետությանը : Բանվոր դաստ-
կարգը յենթարկվում է անգլիացի և բնիկ կապիտալիստների անխիղճ
շահագործմանը—յերկարատև բանվորական որ, աղքատիկ աշխատա-
վարձ, բանվորական կաղմակերպությունների հաղածանք : Աշխատա-
վոր գյուղացիությունը հեծում է անգլիական իմպերիալիստների կողմից
աջակցություն ստացող կալվածատերերի և կուլակների ճնշման ներքո :
1929—1932 թ.թ. ճգնաժամը խիստ վատթարացրեց Հնդկաստանի 300
միլիոն աշխատավորության գրությունը . միլիոնավորների քաղց, աղ-
քատություն, մահացում— այդպիսին են այդ հարուստ յերկրում իմ-
պերիալիստների տիրապետման արդյունքները :


Անդլիական բուրժուազիան չի սահմանափելվում լոկ Հնդկաստանի աշխատավորության տնտեսական շահագործումով։ Նա միշտօնավոր մասսաներին պահում է խափարի և տղիտության մեջ։ սովորողների թիվը Հնդկաստանում ամբողջ ազգաբնակչության 4%-ից չի անցնում։ Անդլիական բուրժուազիան անողոք կերպով ճնշում է ամեն մի փորձ, վոր անում են աշխատավորները՝ ճնշումից ազատագրվելու համար։ Հեղափոխական-ազատագրական շարժման արյունահեղ պատիժներ, տերրոր՝ աշխատավորության հեղափոխական կազմակերպությունների նկատմամբ—այլպիսին և լմպերիալիստների քաղաքականությունը Հնդկաստանում։

Ավելի լավ չե խմաների խստների քաղաքականությունը կիսադաշտացնեցն յերկրներում։ Իբրև որինակ բնրենք Զինաստանի։

Զինաստանն իրենից ներկայացնում ե մոտ 400 միլիոն ազգաբնակչություն ունեցող մի վեթխարի յերկիր։ Թեև թղթիվրա Զինաստանը անկախ պետություն և հանդիսանում, սակայն գործնականում նա վակատար կախման մեջ է գտնվում ճապոնական, անգլիական և ամերիկական իմպերիալիզմից։ Ատարեբկրացիներն իրենց ձեռքումն են պահում կարեւորագույն տնտեսական ձեռնարկությունները Զինաստանում—բանկերը, յերկաթուղթները, արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը։ Նրանց ձեռքումն է մի շարք հարկերի, մաքսային տուրքերի գանձումը։ Այդ բոլոր ձեռնարկությունները վեթխարի շահութ են բերում իմպերիալիստներին։

Ոտարելիքացի լմպերիսալիստները Զինաստանում իրենց պահում են իբրև տերեր, ամենելին հաշվի չառնելով չինացի աշխատավորներին։ Դեռ մինչև վերջերս չինական քաղաքների շատ այդիներում անգլիացի-

ԱԶԳԱԹԻՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑԻՈՆԸ ԽԾՀՄ-ՈՒՄ



Ազգային զբաների ժամը արդյունաբերությանը հնգամակում աճել և պահպան օպերատ (միլ. ռուբ.)։

ները ցուցանակներ եցին կախ տվել՝ «Հներին և չինացիներին մուտքն
արգելված ե» մակադրությամբ։ Լավագույն և ամենալւդարձակ ար-
դյունաբերական բնադրավառները գրավված են ոտարերկրյա կոնցեսիա-
ների կողմից։ Իրենց տիրապետությունը Զինաստանի վրա ոտարերկրյա-
ցի կապիտալիստները պահում են դինված ուժով—Կանտոնում, Շանհա-
յում, յերկաթուղիներում, ծովային ճանապարհներում, ամենուրեք
ցրված են նրանց ջոկատները, կրեյսերները, ջրասույզ նավերը։ Մի
տարի առաջ Մանչուրիան գրավվեց ճամփոնական իմպերիալիստների
կողմից, վորոնք լիակատար տերեր դարձան այնտեղ։

Զինաստամի աշխատավորները հեծում են մասսաներին անխնա շահագործող ուսաբերկրացի և սեփական կապիտալիստների ու կալվա-

ծառերների կրկնակի ննշման ներքո։ Զինաօտանի բանվորներն աշխատում են 15—16 ժամ։ Վոչ մի աշխատանքի պաշտպանություն, բանվորների շահերը՝ պաշտպանող վոչ մի սրբնք։ Նատ գործարաններում կանոյք և յերեխաները 12-ժամյա բանվորական որվահամար ստանում են 10-ական կողմէկ։ Որական 30—50 կողեկի վաստակն արդեն բարձր և համարվում։ Աշխատանքի այլպիսի պայմանների շնորհիվ մահացությունը չինական պրոլետարիատի մեջ անսովոր մեծ է։

Ավելի լավ չե չինական գյուղացիության դրությունը։ Ստկավաճառագութաւնը—մի քանի միլիոն գյուղացիական տնտեսություններն ստեն ըուկ ^{1/4}-ական գեսյատին հող յուրաքանչյուրը—կալվածատերերից Հոդը վարձով վերցնելու ստրկական պայմանները, գյուղացիությանը պլոկով չինական միլիոնարիստ գեներալների հարկային ճնշումը—այս ամենը մեծապույն քայլայման և աղքատացման են հասցնում չինական գյուղացիությանը։

Ստրկացնելով ամբողջ աշխարհը, բռուժուազիան աւծեղացնում է ազգային ննշումը նուև բուև Ցելքրապայում։ 1914 թվին բուրժուազիային հաջողվեց խարել զանազան ազգերի բանվորներին ու գյուղացիներին և նրանց ստիլել սպանել մժմյանց՝ իր ազգի պաշտպանության և ճնշված ազգերի պատագրման լողումպներով։ Իսկ պատերազմի հետևանքով մենք տեսնում ենք աղդային ճնշման զգալի ուժեղացում։ Յեփրոպայում, մանավանդ նրա Արևելքում։ Ժողովուրդների բանտ երցարական թուուաստանը։ Այժմ ժողովուրդների բանտ դարձան՝ Լեհաստանը, վոր ճնշում և ուկրայնացներին, բելառուսներին, լիտվացներին, գերմանացներին։ Ռումինիան, վոր ճնշում և մոլդավացներին, ռուսներին, հունգարացներին։ Չեխո-Սլովակիան, Յուգոսլավիան և այլն։

